

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՅԵՐԸ ԵՒ ՌՈՒՍԻԱ

Հանրային բարեքին սրտովին նախանձախնդիր անձեր, ազգային կեանքին խնդիրները իրարմէ տարբեր տեսակետներէ հրապարակաւ քննելով, կրնան օգտակարապէս ծառայել հանրային լրջախոհ միտք մը ստեղծելու նպատակին: Այս մտածութեամբ կը փափարինք իր ինչ ինչ դիժերուն մէջ համառօտաբար ուսումնասիրել Անաճխոթի «Պատասխանատուութիւնները» խմբագրականը, ներշնչուած վրդովեալ տաք հայրենասիրութեան:



Ռուսութիւրք պատերազմին ատենը հայկական ինչուրին մէջ Օտեանի գպրոցին ուղղութիւնը ըմբռնելու համար պէտք է 1878էն քսան տարի ետ գտնուալ, եւ քննել այն նորածագ քաղաքական գաղափարները որոնց ազգացութեան ներքեւ կը հատուննար ժամանակին երիտասարդութիւնը, ապագային վարիչը:

Մինչեւ 1860 «հակառուս» բացատրութիւնը ստեղծուած չէր թիւրքիոյ Հայոց համար: Ռուսիոյ նկատմամբ հակալիք զգացումներու ծնունդը կը զուգադիպի ան տարիներուն ուր հայրենասիրութեան գաղափարը կը սկսէր ծլիլ ու ծաղկիլ: Մտքերը խանգարող պատահարը Պալաժէնիայի յայտնութիւնը եղաւ: Հայաստանեայց Եկեղեցին յունադաւան պետութեան մը կարգ ու կանոններուն հպատակեցնելու օրէնսդրութիւնը քսան տարիէ ի վեր թլեւ հոչակուած՝ դրեթէ անձանօթ կը մնար թիւրքիոյ Հայոց: Սահմանադրութեան թուականին, Կ. Պոլսոյ Հայութիւնը անդրադարձաւ թէ քրիստոնէայ պետութեան մը մէջ Հայոց եկեղեցին չէր վայելեր այն բարոյական նպատակները որ իսլամ կառավարութիւնները անոր կը թողուն, իրենց ազիտութեամբ կամ անկարողութեամբ: Թրքահպատակ եպիսկոպոսներէ ընտրուած կաթողիկոսներուն անտանելի կը դառնար ռուսական օրէնքին լուծը: Պոլիս եկեղեցական ազատութիւն վայելող, ամէն տեսակ զիրութեան ընտելացած նախկին պատրիարքները, Էջ-

միածին «վեհափառ» ախտոտով փառազարդեալ, չինովնիկական կաշկանդումներու դէմ ըմբոստացումի հակամէտ կը գտնուէին: Մատթէոս կաթողիկոս վեհարանէն կ'արտաքսէր ձարին պատկերը, «Ասոր աստեղը ես ի՞նչ եմ որ ուրիշ վեհափառութիւն մըն ալ գլխուս վրայ պիտի դրուի» յայտարարելով: Ու իր գլխուն վրայ կը գտնէր պրօկուրօրը, «տէրութեան աչքն ու ախանջը», որ ահիւ եւ զողով իր բարձրահայեաց դիտարանը կը վերաբաղմեցնէր իր հպատակներուն, նոյն իսկ հոգեւոր պետներուն, մարմինն, մտքին, խղճին միահեծան տիրոջ կենդանադիրը: Գէորգ կաթողիկոս Պոլսէն ռուսամոլ մեկնելով, քիչ ետքը բոլորնիացի հայրենասէրի մը մոլեգնութեամբ Ռուսը կ'ատէր: Իր ձեռնասունը՝ Մանկունի Վահրամ եպիսկոպոս, չուզեց երբեք պատարագել, ձարին անունը յիշատակելու պարտականութենէն ազատագրուելու տենչէն մզուած: Եպիսկոպոսանալու համար Էջմիածին գացող վարդապետները իրենց վերադարձին ամբողջ հայ աշխարհը կը զըզրդէին Եկեղեցիին սարկութեանը, հայրապետին գերութեանը սրտայոյզ նկարագրութիւններովը: Կ. Պոլսոյ Ազգային Ժողովը Պալաժէնիայի դէմ բողոքելով կը թընդար: Մամուլը, պարագլուխ ունենալով Ծիլն Առարայրին, որուն խմբագրը Մարկոս Աղաբէկեանց Մատթէոս կաթողիկոսի օրով թիֆլիս գտնուած էր, թարգման կը հանդիսանար ազգային զգացումներուն: Ներսէս եպիսկոպոս Վարժապետեան Գէորգ կաթողիկոսի ընտրութեան ամօթիւ Կ. Պոլսէն Նորատունկեանի հետ Էջմիածին պատուիրակ երթալով, «կանտիտատ ս'չ ընդունիմ» արձանագրութեամբ կը բողոքէր Պալաժէնիայի դէմ: Երբ Գէորգ կաթողիկոս Պոլսէն պիտի մեկնէր, հայ մամուլին ներկայացուցիչները զօրեղ բողոքագրով մը կաթողիկոսէն Պալաժէնիայի ջնջումը կը պահանջէին:

Բնականաբար օսմանեան կառավարութիւնը զոհութեամբ կը դիտէր թիւրքիոյ Հայոց մէջ Ռուսիոյ ընդդիմադիր ուղիի մը երեւումն ու զօրացումը: Իր շահերուն ձեռնառ էր ուժ տալ մեր հակառուս ձգտումներուն, աս քաղաքականութեան կը նպատակէին Դրան ծառայող հայ պաշտօնատարներ որոնք հայ ժողովուրդը Ռուսիայէն ցրտացնելու աշխատութեամբ իրենց ազգին մեծ ծառայութիւն մը մատուցած ըլլալու խղճամիտ համոզումը ունէին: Օտեան Ալի փաշային կը ծանօթացնէր բժիշկ Շիշման:

եանը (Երեւնց), որ մասնաւոր պայմանադրութեամբ յանձնառու կ'ըլլար Մասիսի միջոցաւ հակառու գաղափարներ տարածել Հայոց մէջ:

Նախորդ սերունդին ազատութիւնը, որ դեռ եկեղեցիին շրջափակը միայն կը պայթէր, պարսաւելու ո՛ր եւ է արդարացուցիչ պատճառ չենք կրնար ունենալ: Եկեղեցիին պետութիւնը շա՛տ ծանր պիտի դար ժողովրդի մը որուն համար կրօնքի եւ հայրենիքի զգացումները ի մի ձուլուած էին: Թիւրքիոյ մէջ օր մը քաղաքական ազատութեան ձգտելու պատրաստուող ազգ մը անշուշտ պիտի ցանկար Ռուսիոյ մէջ ալ դո՛ւնէ անվթար պահպանել կրօնական ինքնավարութիւնը: Տասնըհինգ դարու եկեղեցական օրէնքաբանութեան ու աւանդութեան բռնաբարուած տարակոյս չկար թէ հակառու զգացումներ առաջ պիտի բերէր Թիւրքիոյ Հայոց մէջ. պատասխանատուութիւնը ի հարկէ բո՛քաբարեալներուն վրայ չի ծանրանար:

Եւ օրին մէկն ալ երբ դէպքերը քաղաքական դեր մը կը նշանակէին Հայոց, այդ 1860ի սերունդը կը հպատակէր, դուցէ մինչեւ իսկ անզգալարար, քսան տարի շարունակող զղացումներու եւ դադափարներու տպաւորութեան: Հայաստանի աւսացումին վախն էր որ 1878ին կ'ուղղէր Սերվիլէնի, Օտեանի, Փափագեանի եւ համախոհներուն միտքը: Ժողովրդի մը զարգացած գասակարգն է որ դադափարային խնդիրներու մէջ ապագային վտանգը կը նախատեսէ ու ընդդիմաւարտութեան կ'առաջնորդէ ազգին:

* * *

Հայ ազգութեան ապագան անվթար պահպանել փափաքող մեր քաղաքադէտները բնականաբար պիտի ցանկային բարեփոխուած տեսնել Սան-Սթէֆանոյի դաշնագրին 16րդ յօդուածը: Դիւրին էր նախատեսել թէ Ռուսիա Հայաստանը բարեկարգելու նպատակաւ որոշեալ պայմանաժամի մը համար զայն գրաւելէ յետոյ այլ եւս հոնկէ դուրս ելլելու փութաշանութիւն ցոյց պիտի չտար, ինչպէս որ ետքէն միեւնոյն առաջադրութեամբ Աւստրիա Հէրսլը-Պոսնիան, եւ Անգլիա Եգիպտոսը իւրացուցին: Օտեանի խումբը այդ ապագային փրկութեանը համար ինքնավար Հայաստանի մը հիմնարկութիւնը ծրագրեց, անյաջողութեան պարագային ալ՝ մինչեւ աստիճան մը բարեկարգուած Հայաստան մը ներկային մէջ բաւական ու ապագային համար յուսալիւր համարելով:

Ներկայ յօդուածին ծրագրէն դուրս է Սան-Սթէֆանոյի ու Պերլինի դաշնագիրներուն հախընթաց եւ հետեւորդ պարագաները անգամ մը եւս քննութեան ենթարկել. գործուած սխալներուն վրայ Նոր Կեանքի եւ Մարտի մէջ զանազան առթիւ արդէն խօսուած է: Սակայն պէտք է ընդունիլ որ եթէ մինչեւ իսկ մեզի աղիտաբեր համարուի 16րդ յօդուածին ջնջումը, հարուածը Անգլիայէն էր: Պետութիւնները Պերլին հաւաքուեցան, մինչ Մեծն-Բրիտանիոյ նաւատորմիդը Սան-Սթէֆանոյի դէմ կը խարտխէր, ու Թիւրքերուս զաշնագիրը սրբազրեցին եւրո-

պական ընդհանուր շահերուն համաձայն: Հայաստանէն Ռուսիոյ վտարումին իբր յառաջաբան, Կիպրոսը արդէն բանի մը օր առաջ անգլիացած էր: Միայն Անգլիա ջնջեց 16րդ յօդուածը. ու այս պնդան ճշմարիտ է որ Անգլիոյ ազատական կուսակցութիւնը Հայաստանի արդի ծանր վիճակին պատասխանատուութիւնը կը վերադրէ պահպանողական կուսակցութեան՝ իբր 16րդ յօդուածին ջնջումը պահանջող: Մեր պատգամաւորութիւնը շատ շատ այդ գործը դիւրացնող միջնորդ մը կրնանք համարել:

Իրաւ է որ Պերլին շոշափելի առաւելութիւն մը ձեռք չբերինք. այս անյաջողութեան պատճառը Հայրիկ շատ լաւ ամփոփեց Վեհաժողովէն վերադարձին: Իր առաքելութեանը վրայ խօսելով Օրթոդոքսի ժամը, իմացուց թէ «Գարատաղցին, Յոյնը, Պուլկարը ձեռքբերին մէյմէկ սուր, ուտերին ալ մէյմէկ հրացան, Վեհաժողովին դուռը կայնած էին. ինչ որ ուզեցին՝ ան առին: Ես ալ ձեռքս խաչ մը բռնած կայնած էի, ինձի ալ ի՞նչ տուին նէ ա՛ն առին:» Ահա պատմութեան իմաստասիրութիւնը:

* * *

Մեր ժամանակակից պատմութիւնը իր մանրամասնութիւններուն մէջ թեր ու դէմ կարծիքներով պէտք է ուսումնասիրենք, մասնաւորապէս՝ մեր հիմնական գործունէութիւնը փորձառութեան օժանդակութեամբը ղեկավարելու նպատակաւ: Սակայն այդ պատմութիւնը տակաւին լմնցած վերջացած անցեալ մը չէ, այլ կը շարունակուի. ներկայ վիճակնիս անցողական է, ուստի եւ ինչ որ գործուած է ազգային կեանքերնուս այս շրջանին զայն վերջնապէս ու վճռապէս գնահատելու պայմաններուն մէջ չենք: Երկու տարի առաջ ո՛վ կրնար կրեալի մէկ դարու ապստամբական պատմութեան վրայ վերջին խօսքը ըսել: Հայաստանի խնդիրը այսօր Եւրոպայի էն կարեւոր հարցերէն մէկն է, ու երբ լուծուի, ան ատենն է որ 1870ին սկսած պատմութիւնը կրնանք իմաստասիրել, քննադատել, գնահատել: Հիմա ջանքերնիս պէտք է ըլլայ որ այդ լուծումը ազգին յոյսերը պահէ: Այդ ուղղութեան մէջ մեր էն ամուր յենարաններէն մէկը 61րդ յօդուածն է. հայկական խնդիրը անոր միջոցաւ եւրոպականացած է, փոխանակ Թիւրքիոյ ներքին մէկ պարզ դաւառական դժուարութիւնը մնալու: Պերլինի դաշնագիրը «հայաբնակ նահանգներ» բացատրութեամբ նաեւ շատ ընդարձակեց մեր փափաքներուն գործադրութիւնը. 61րդ յօդուածին կարեւորութիւնը ըմբռնելով է որ Պոլսոյ մամուլին կամ Հայոց շրջանակներուն մէջ անոր յիշատակութիւնը պետական ոճրագործութեան համահաւասար կը համարուի: Ինչ որ ունինք պահենք, մինչեւ լաւագոյնը ստանալնիս:

Այն զանազան պայմանները որոնք իրարու միանալով պիտի բարեփոխեն Հայաստանի վիճակը, անոնց զըխաւորներէն մէկն է 61րդ յօդուածը: Չտրանջանք անոր դէմ, այլ ջանանք մեր յատակագծին ի նպաստ անկէ առնել ինչ օգուտ որ կրնայ տալ:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Գ

Պ Ա Ր Ս Ի Կ Ա Մ Բ Ո Ւ Ը

Հայ պատմագիրները որ հայ ժողովրդին վրայով շատ քիչ յիշատակութիւններ են թողած մեզ, ալ աւելի քիչ տեղեկութիւններ կուտան իրենց դրացի եւ համացեղ պարսիկ ժողովրդին կենցաղավարութեան, կարգուսարքին, նիստուկացին եւ ընկերական առանձնայատկութեանց մասին: Բայց Փաւստոսի, Եղիշէի, Փարպեցու, Յովհան Մամիկոնի եւ այլ մատենագիրներու յիշատակած Պարսիկը նոյն Պարսիկն է այսօր ինչ որ հնութեան այդ երանելի դարերուն: Ամէն բան նոյն է. միայն զրազաշտական մօլանդութեան յաջորդած է մահմետական կոյր ու խզող հաւատքը:

Ժողովրդի մը հոգեբանութիւնը ուսումնասիրելու համար, քն կարելու եւ նշանակելի կէտն է քննել անոր կրօնական ոգին, այն մեծ ազդակը որ աշխարհի գոյութենէն ի վեր իր ետեւէն քաշած տարած է մարդկային ամբողջ ցեղը, սկսեալ այն ժամանակէն երբ մարդ կը ծնէր կրակին ու ընութեան հրաշալիքներուն կամ իր ձեռագործ կուտքերուն առջեւ, մինչեւ զարգացած մաքին խոնարհիլը անձանօթ ու գերագոյն արարչի մը զօրութեանը հանդէպ:

Պարսկաստան այցելողին առաջին տպաւորութիւնը կ'ըլլայ հաստատել պարսիկ ամբոխին կրօնական կոյր մօլանդութիւնը եւ անձնազոհութեան աստիճանին հասնող յարուժը իր ազգային կրօնքին: Ներկայ ազգերուն մէջ գէթ ես չեմ ճանչնար այնպիսի ազգ մը որ իր կրօնական խստութեամբ եւ խաւարամտութեամբ հաւասար ըլլայ Պարսիկին:

Պարսիկը, արեւելքի հարազատ գաւակ, ի բնէ օժտուած է երեւակայտ, յերիւրոյ եւ հէքեաթներու աշխարհին մէջ ապրող մաքու մը: Պատկանելով մահմետական կրօնքի շէյխ ազանդին, անշուշտ Պարսիկը չճանչցող մէկը զանի պիտի բաղդատէր թիւրքին հետ, եւ որպէս նոյնանման մահմետական տարր մը՝ նոյնանման եղբակացութեան մը պիտի հասնէր անոր նկարագրի մասին. բայց ուսումնասիրութեան այդ գիծը գէպի սխալ պիտի առջնորդէր զինքը:

Պարսիկին հաւատացած Ալլահն ու Մահմատը կը նմանին մեծատունին արկղին մէջ պահած թանկագին գոհարին, զոր երբեմն երբեմն միայն մէջտեղ կը հանէ տեսնելու հաճոյքը վայելելու համար: Պարսիկին համար կայ աւելի նուիրական, ամենօրեայ ապաւէն սուրբ մը, շէյխ — նահատակ — Ալին, որ իր երկու որդիներուն, Հասանի ու Հիւսէինի հետ սրախողխող եղած է Սիւնիների խալիֆա Էօմարէն, որով որչափ պաշտելի ու սիրելի է Պարսիկին համար Ալի անունը, նոյնչափ ատելի ու զգուելի է Էօմարը:

Պարսիկ երեւակայութիւնը այնչափ սաւառներ է Ալիի շուրջ որ ազանդաւորներու մեծ մասը զանի Աստուծոյ ներկայացուցիչ կ'ընդունին աշխարհիս վրայ. այդ ազանդաւորները կը կոչուին Ալի-Ալլահիներ:

Պարսիկը ամէն բոլոր Ալին ունի իր շրթունքներուն վրայ, «Եւ Ալի» ի աղմուկն է որ կը զրդէ Պարսկաստանի մթնոլորտը: «Եւ Ալի» կը կանչէ երկրագործը բահը հողին մօտեցուցած ժամանակ. «Եւ Ալի»ն պարսիկ բռնակրին ուժն է, «Եւ Ալի» պարսիկ կարաւանին մեկնման կոչն է: «Եւ Ալի» կը գոռար պարսիկ խուժանը երբ մեր նաւը Պաքուէն կը մեկնէր դէպի Պարսկաստան: Այդ վայրենի, բայց կրակոտ, «Եւ Ալի» ի աղմուկը կ'ործաներ է մինչեւ անգամ Պարսից արքայական գահերը: Այդ «Եւ Ալի»ն նոյնպէս շատ անգամ պարսկահայուն գեղազոյութեան պատճառ է դարձած. այդ աղմուկը հայ ականջներուն, հայ սրտերուն ակամայ սարսուռ մը կ'ազդէ: Այդ «հանգանակ»ը կանչող Պարսիկը այլ ես ուրիշ մարդ է. անոր ճկուն երեւակայութիւնը կը փոխադրուի Ալիի գոխային նահատակութեան վայրը, ու այլ եւս պարստ է զրկելու այդ արիւնոտ սուրը եւ իր պաշտած հերոսին նման շէյխ մը դանակելու. այդ բոլորին չկայ անոր համար ոչ օրէնք, ոչ իշխանութիւն եւ ոչ ալ ֆարաշին սպանալից քիօքսիլը:

Մտիւր Պարսկաստան, ո՛ր անկիւն որ երթաս՝ «Եւ Ալի» ի աղմուկը ականջիդ պիտի հասնի. շուկան, իր երկայնութեամբ լեցուած ծնկաչոք հոս բաղմութեամբ մը, կը լսէ մօլլային քարոզը, որ Ալին կը փառաբանէ, մինչդեռ իր խօսքերուն կը խառնուին ժողովրդին սրտակոծումները ու յուզման հառաչանքները. ու ամէնուրեք, առնելու առջեւ, փողոցներու մէջ, հրապարակներու վրայ, սարվիշը իր երգով, մօլլան իր քարոզով Ալին է որ կը պատմեն, եւ շատ ազդական է տեսնել թէ՛ պատմողներուն եւ թէ՛ լսողներուն բուն ոգեւորութիւնը:

Որչափ որ Պարսիկը միշտ աչքին առջեւ ունի իրեն իտէալ դարձած անձնաւորութիւնը, բայց աւելի նուիրական ու հանգիստաւոր տօն մը ունի, Ալիի եւ որդիներուն նահատակման տարեգարձին օրը, Շահսու-վախսէի ծիսակատարութիւնը: Չկայ Պարսկաստան այցելող մատենագիր մը որ չնկարագրէ այս քստմեղի արարողութիւնը, եւ սակայն, կ'ըսեն, ոչ մէկը յաջողած է անոր իրական սարսափը տալ: Իսկապէս ազգային-կրօնական շքեղ հանդէս մըն է, ամէն կերպով թատերական, միայն թէ յուզում մը կայ որ անկեղծ է: Պարսկաստան չգացած երբ կը կարդայի կամ կը լսէի այս մասին, կը կարծէի թէ եթէ ներկայ ըլլամ ծիծաղո չպիտի կրնամ պահել, սակայն երբ հանգիստտես եղայ, տպաւորութիւնս բոլորովին հակառակն եղաւ, ակամայ խոփը մը կը զգայի: Կրօնքը իր դարաւոր արհաւիրքներուն բոլոր ուժովը կը պատկերանար զիմացս, կուտքերու առաջ զոհուած մարդերուն արիւնոտ դիմացս, կուտքերու առաջ զոհուած մարդերուն արիւնոտ դիմակէն մինչեւ ճակատէն ճեղքուած ինքնազոհ շէյխ Պարսիկը՝ պակուցիչ պատկերներու շարք մըն էր որ կ'անցնէր իրենց ողբերգական դժնէութեամբը:

Շախտե—վախտեի՝ ծիսակատարութիւնը իրօք մէկ ամիսէն աւելի կը տեւէ, եւ իմ նպատակս չէ ամբողջ հանդէսին նկարագիրը ասլ. միայն վերջին տեսարանին սոսակատարութիւնս կ'ամփոփեմ մէկ քանի տողի մէջ: Անվերջանալի թափօր մըն էր որ կ'անցնէր. առջեւէն կը տանէին շիյիններ (Ալիի, Հասանի, Հիւսէինի) արեւնուայ դազադները զարդարած ձիերու վրայ բարձած. բազմաթիւ դրօշակներ եւ «Ալի»ի մեծ «ձեռք»երը դէպի վեր կը բարձրանային. զազադին հետեւող մանուկներուն բազմաթիւ խումբը հստումօխի ցանելով զլիւրնուն վրայ եւ մազերը փետտելով, ողբի ախուր եղանակով մը կուլար «Վուրճն հա՛ վուրճն, Ալիի սալան վուրճն»: աղմկալից ժողովը, կրօնական մոլեգին զբացման մը պտղակուտը, եւ ահա սուրբը ճակատներու վրայ կ'իջնային, շղթաներ մերկ կոնակներ կը ջախջախէին, կուսի ուժգին հարուածները արդէն կարմրած ու կապուտցած կուրծքերը կը թոպէին. սահմակիչ ու քստմնելի տեսարան մը որ դազար չունէր, որուն վարադոյին իջնալուն զուր էր սպասել: Էօմարն ալ բեմին վրայ է, մերկացուցած սուրով կը մօրթէ անխնայ: Հայ բահանան ալ բեմին վրայ կ'իջնէ, կը փութայ, կը միջամտէ եւ կը ջանայ Էօմարին սիրտը կակղեցնելով Ալիին սրդիները ազատել, բայց Էօմար անյողզող կը մնայ: «Վուրճն, հա՛ վուրճն, կը պոսայ ամբոխը, Էրմանիա բահմ՝ օլտի, բեաֆիր Էօմարա օլմատի, վուրճն հա՛ վուրճն» (էրմէսին գութ եղաւ, անգութ Էօմար գութ չունեցաւ): Էօմարի դերը կատարողները շատ անգամ կը վարանին այդ դերը ընդունելու, որովհետեւ խելագարութեան հասնող ամբոխը պատահած է որ գանի կտոր կտոր ըրած է որպէս ճիշդ Էօմար մը:

Փակագծի մէջ ըսեմք, որ առաջները հայ բահանայի դեր կատարողին կը հազցնէին պատարազիչ բահանայի զգեստները, սակայն Ստեփաննոս եպիսկոպոսի առաջնորդութեան օրով մերժուեցաւ այդ զգեստները տալ, եւ այդպիսով վերջ գտաւ այդ բանը:

Կրօնական այսպիսի մուշտանգ ժողովուրդ մը անշուշտ խորապէս պիտի ճանչնար կրօնական պետ ու իշխանութիւն, եւ այդպէս ալ է. —մուշտէիտի իշխանութիւնը շատ անգամ կը գերազանցէ արքայական իրաւունքները: Մուշտէիտի տան, որպէս Արշակաւանի մը, պաւտի (ապաստանարան) մտած մարդասպանը, սճրագործը, նոյն իսկ արքայասպանը, այլ եւս ազատ է: Նասրէտտին շահը ըստ պահանջ պարսիկը որ պաւտի մտած էր մէջիտ մը, անուշբերնելով միայն սատրապամը յաջողեցաւ զանի գուրս հանել, որովհետեւ ուրիշ ճար չկար: Նասրէտտին շահի օրով, Թաւրիզի մուշտէիտը համարձակութիւն կ'ունենար, անպատիժ կերպով, շահին հրովարտակը շան մը զգէն կախելով Թաւրիզի ամբողջ շուկան ստոցնել տալ: Շահը չհամարձակեցաւ զանի անմիջապէս պատժել, ընդհակառակը շալ-խաշարով մը անոր սիրտը գրաւեց, քիչ ժամանակ յետոյ քաղցրութեամբ զանի Թէհրան կանչեց, հիւ-

րասիրեց եւ յանկարծ դադարի աքսորեց Պարսկաստանի մէկ խուլ անկիւնը:



Սակայն պարսիկ միտքը, որ ընդունակ կ'երեւի երկար խորհրդածելու, եւ բնութեան խորհուրդներուն թափանցելու վառ հետաքրքրութիւն մը ունի, չնայած խաւարին կաշկանդող շղթաներուն պրկման, մեծ միտքեր ալ տուած է: Ֆրտուսի մը ունին, գիւղացի ստաբոբիկ աղան, հողի ու մոխրի մէջ թաւալող պարսիկ մանուկը, որ կը գրաւուէր բնութեան հրաշալիքներէն եւ խանդուն բանաստեղծ մը կը դառնար. ազգային աւանգաւելաներ, հէքեաթներ, փէհլէվաններ իր ստեղծագործութեանց նիւթ մատակարարեցին, արուեստի քնքուշ զարդերու հիւսուածքի մը մէջտեղ: Ֆրտուսին դէպի երկինք կը նայի, ամէն բան հոն կը փնտռէ եւ կարծես խորասուզուած հոն կը վերափոխուի: Ֆրտուսի երկը, «Շահնամէ»ն, պատիւ կը բերէ այն ազգին ուր ծնած է բանաստեղծը. իր ախպարները պիտի մնան միշտ պարսիկ ազգին երեւակայութեան ճշգրէիտ պատկերները արտայայտող ախպարներ, եւ բանաստեղծին երգն ու անունը չէ լուած Պարսկաստանի մէջ մի անկիւնը եւ պիտի չլռէ:

Ֆրտուսիէն յետոյ պարսիկ մտքերուն բնաշրջման պատմութեան մէջ մեծ դէմք մը կայ, Պապին, Պարսկաստանի ընկերվարական գաղափարին հիմնադիր իմամ—Մէհտին, որ յիտուն տարի առաջ իր ազատամիտ վարդապետութեան համար նահատակուեցաւ Թաւրիզի Ալա—Ղարուն, իր աշակերտներուն հետ միասին: Պապիի մահուամբ իր վարդապետութիւնը տարածուեցաւ ամբողջ Պարսկաստանի մէջ, եւ այսօր որոշ կազմակերպութիւն մըն է հաստատ հիմքու վրայ զրուած: Պապիականութեան բուն կեղծոնը երկրէն գուրս, Հնդկաստանի մէջ է, ուր ունին եւ իրենց բերան եղող լրագիր մը, որ զազանի կը տարածուի Պարսկաստանի մէջ: Պապիականութիւնը բողոք մըն է շարխաթի օրէնքին ծիսակատարութեան ու մուշտանութեան դէմ, բնապետութեան դէմ, կը քարոզէ մարդկային, ազգային եւ անհատական ազատութիւն ու հաւասարութիւն, կը հերքէ սեփականութեան իրաւունքը: Պապի վարդապետութեամբ՝ չկայ յաւիտենական կեանք. գերեզմանը վերջ կուտայ ամէն բանի. մեղքի գոյութիւնը չ'ընդունիր, միայն հիմնական սկզբունքն է իրենց համար — ինչ որ ընկերին կամ մարդուն վնաս է պէտք չէ կատարել: Ունին իրենց որոշ ժողովատեղիները, ուր կը հաւաքուին լսելու իրենց վարդապետութեան մասին եւ երգելու իրենց սեփական երգերը:

Կառավարութեան կողմէ հալածանք կայ այս վարդապետութեան դէմ: Սակայն պապիականութիւնը Պարսկաստանի յառաջդիմութեան նախադուռն է եւ մեծ ոյժ մը, որ պատրաստ է օր մը չէ օր մը խորտակելու Պարսկաստանի խաւարի շղթան:

Այս վարդապետութեանէն զատ Պարսկաստանի մէջ

տարածուած են ուրիշ շատ մը աղանդներ: Սոսիսներ, ուրոնք գերագոյն էակի մը միայն կը հաւատան եւ այդ էակին արտայայտութիւնը կը գտնեն բնութեան մէն մի առարկայի մէջ: Տաճարներ, որոնք պապիականութեան մէկ ճիւղը կը կազմեն: Կան եւ հոգեփոխութեան հաւատացող աղանդաւորներ:

Դեռ մինչեւ այսօր ալ Չրագաշտական կրօնքի ներկայացուցիչները անհետացած չեն Պարսկաստանէն: Թէ՛հ-րանի շրջականները եւ Պարսկաստանի խորերը Չէնտաւէտան պահած է իր պատգամները: Հին կրակապաշտութեան մնացորդները կը կոչուին Գապրիներ:

* * *

Ազգի մը յառաջդիմութեան ահալիրաներ կը հանդիսանան ազգային զբաղմունքներն ու դպրոց: Սակայն Պարսկաստանի մասին խօսելով ըսել պարսիկ արդի գրականութիւնն ու դպրոց, կը նշանակէ լոկ կատակ մը ընել: Արիական ցեղը ընդունակ է ընդգրկելու լուսաւորեալ աշխարհի բազմաթիւութիւնը, և պարսիկ մտաւոր կայծերը այդ ապացոյցը տուած են արդէն. բանաստեղծ Հաֆսին, Ֆրսուսին (Շահնամէ), առակախօս Սաատը (Կիլիստանն ու Պօստան), երգիծարան Ղազան, պարսիկ զբաղմունքներն ու հարսկանութեան գեղեցիկ ներկայացուցիչներ են: Բայց այսօր Պարսկաստանի հրապարակին վրայ գրագէտներ չկան. լրագիր մը ունին Կ. Պոլսոյ մէջ, շաբաթաթերթ մը Հնդկաստան, մէկ-երկուք Թէ՛հրան եւ մէկ հաս ալ Թաւրիզ, որոնք իրենց զբաղմունքները կը փայլին:

— Ինչպէս է ձեր լրագիրը, շատ կը տարածուի՞, հարցուցի օր մը Թաւրիզի Նասրի շաբաթաթերթին խմբագրին:

— Ինչպէս տարածուի, սկսաւ պանդատիլ ան. մեր ժողովուրդը ազէա է, լրագիրը մեղք ու պատուհաս կը համարի: Ու պատմեց թէ քիչ առաջ մարդ մը իր կինը սպաննած է այն պատճառաւ որ այս վերջինը լրագրի կտոր մը փակցուցեր էր լուսամուտին. Ալլահ, ի պատիժ այդ մեծ ոճրին, լուսամուտին տակ զրուած աման մը քացախը աւրեր էր, եւ Պարսիկն հասկացողութեամբ՝ եթէ ինք իր կինը չսպաննէր, Ալլահ զեռ շատ պատուհասներ պիտի հասցնէր իրենց զլիտուն: Աւելի ուշադրաւ է այն որ մօլլան արդարացուցեր էր կինը սպաննող Պարսիկը:

Իսկ Պարսից դպրոցներու մասին խօսք ընել անգամ չարժեր. ամէն մարդ գիտէ մատրասաներու ծեծ ու քէթութակի քաւարանները, ուր մանուկները տարիներով միտք կը փտեցնեն, եւ կը կորսնցնեն ամէն բնական ընդունակութիւն. այդպիսի տանջանարաններու երես չտեսնողները շատ աւելի երջանիկ, առողջ եւ ազատ մտքի տէր մարդիկ են. թէ՛ւ տղէտը միշտ տղէտ է, բայց Պարսից նազկալի մատրասաններու մատաղ սրտերու վրայ քսած թանձր սեւ մուրը փնտուռեք բարիք մը չէ:

Սակայն այս թմրած երկրին մէջ արթնութեան կայծեր ալ կը տեսնուին: Նասրէտտին շահը հարիւր յիսունի


չափ ուսանողներ կը զրկէր Եւրոպա ուսանելու: Հիմա ալ թէ՛ Կ. Պոլիս եւ թէ՛ Բարիզ պարսիկ ուսանողներ կան: Այդ հարցը զգալի պահանջ մը դառնալով այժմ շահի պաշտօնին մէջ կ'արժարծուի: Շահի կրտսեր որդին այժմ կը ճանապարհորդէ Եւրոպա եւ ամէն տեղ բազմաթիւութեան սիրահար մը կը ներկայացնէ ինքզինքը: Թէ՛հ-րանի եւ Թաւրիզի մէջ կան ազնուականներու մասնաւոր դպրոցներ, ուր ուսուցիչները Եւրոպացիներ են: Շարժում մը կ'ուրուագծուի արդէն:

* * *

Ներկայ յօդուածը վերջացնելէ առաջ կ'ուզէի երկու խօսքով ամփոփել պարսիկ ամբօխի յարաբերութիւնները հայ ժողովրդի հետ: Այն կրօնական մեծ վիճը որ զերենք կը բաժնէ, բնաւ ասելութեան առիթ չէ դարձած: Հայը, աստիճան մը ազելի լուսաւորեալ, արհամարհոտ աչքով կը նայի տղէտ Պարսիկին վրայ: Պարսիկին կրօնական հասկացողութեամբ ալ, Էրմանին հարաւ է. անոր հացը չ'ուտեր, թող չի տար որ հայը ձեռք դպցնէ իր առարկաներուն, զանոնք չպղծելու համար, շատ տեղ ալ բնաւ չի թողար իր սեմէն ոտք ներս կոխել Հայուն, եւ հակառակ պարագային պատահած է որ Հայուն ոտք կոխած տեղին հողը քերթելով դուրս են ձգած: Պարսկաստանի ճանապարհորդական իջեանները Հայերուն համար սրուտեղեր ունին, սրովհետեւ պարսիկ դիւզացիները Հայը չ'ընդունին իր յարկին տակ: Պարսիկը Հայուն ձեռքի պսպղունը գրամն է միայն որ ուրախութեամբ կ'ընդունի, որովհետեւ իր հասկացողութեամբ զրամը ինքնին հարաւ է, իսկ ուրիշ հաշուով գիտենք որ երկու բացասական հաւասար է մէկ զբաղմունք: Աւանդաբար կը պատմեն թէ Պարսիկները առաջները այս խտրութիւնը չէին դնէր, ընդհակառակը շարունակ հայ դիւզացիին ճտին նստած՝ կ'ուտէին, կը խմէին տրօրեղով դիւզացիին շահերը: Հայ քահանայ մը կամենալով վերջ տալ այս զեղծումներուն, ուրանալով քրիստոնէութիւնը՝ մուշտէիտի աստիճանին կը հասնի և կը հաստատէ օրէնք մը որով գոհեք կը սպաննայ Հայուն հետ յարաբերութիւնն ունեցողին: Ես իմ Աստուած, լաւ դործ է կատարած մեր աւերակը:

Այսու հանգերձ Պարսիկը կոյր մտաւորութիւնն ու հաւատարմութիւնն ունի գէպի Հայը եւ յարգանք մը զօր բընական կը համարինք: «Էրմանի եալան տանը շաղ» (Հայը սուտ չի խօսիր), արմատացած հաւատք մըն է Պարսկաստանի մէջ: «Իրամզ Հայուն պահ տուր», «Ճամբորդած ատենդ բնաւ Սիւնիի տուն մի՛ իջեանիր, այլ Հայուն», «Ճամբան Հայ մը եթէ քնացած տեսնես, սուրբ անոր զլիտուն վրայ պահելով պահպանէ զանի», Պարսիկներուն համար սկզբունքներ են:

Վ. ՇԱՀԷՆԻ



ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՍ, 12 մարտ 99

Նուպարի դագաղին շուրջը. — Անիրաւոյնքան զոհ մը. — Պսակի գրկուածները.

Նուպար փաշայի մահուան լուրը երբ առի, միաքս քսան տարի ետ սուրաց: Պահ մը ապրեցայ յիշատակովը սարսուտի կեանքին որ պահ մը Պոլիս ամէնուս ալ կեանքն էր եղած, իմանալով լորտ Պիքընսֆիլտի յայտարարութիւնը խորհրդարանին մէջ՝ «Հայ մը, ճշմարտապէս պետական մարդ, Նուպար փաշա...»

Ազնուազգի դժբաղդ ժողովուրդներ լուծը վզերնին գլխիկոր կ'ընթանան, յոգնած ցուլի պէս. եւ ահա մէկէն ի մէկ կը խելայեղին. կարմիր գոյն մըն են սեսեր, —ցեղային փառքի կարմրութիւնը: Անոնք որ ի շոնդ իրենց փառքին ոստոստ վեր կը ցատեցնեն մրափող ժողովուրդ մը, ետքէն անոնք ալ ուրիշ կարմրութեան մը պատասխանատունները չեն արդեօք: Եւ սակայն ազգի մը ճակատագրին սեւութիւնը սրբելու համար կարմիրէն ի զատ գեռ ուրիշ գոյն չեն գտած պատմութեան իմաստասիրութիւնը եւ քաղաքականութեան գիտութիւնը:

Գրեթէ միեւնոյն ատենն էր որ Նուպար ու Մէլիքոֆ, Լազարէֆ ու Տէր-Ղուկասոֆ անունները միացած՝ Հայութեան կը հիւսկին փառքի կարմիր զրօշակը, որուն վրայ իբր զինանշան կարծես կը փայլէր մեր աչքերուն Նաբոլէոն Գի տասնեակ տարի առաջ Հայոց նկատմամբ պաշտօնական յայտարարութիւնը, «Ասիոյ խորը ժողովուրդ մը կայ որ մեծ ապագայ կը խոստանայ:» Հասած էր ժամը: Ահա պետական մեծ Հայն էր որ կը փայլէր, ահա զինուորական մեծ Հայն էր որ երեւան կուպար: Հայ ցեղը Եւրոպայի կուտար այն աաղանգները որոնք կայսրութիւններ կը ստեղծեն, կը պահպանեն ու կը ...կործանեն: Բայց գեռ մինչեւ այսօր Հայաստանի Բանթէոնը տակաին Թիֆլիսի Վանքի Մայր-Եկեղեցին է, Ալեքսանդր զրոյ Պօղոս Պետրոս ժամն է: «Հողէն ելար հողը դառնաս», «Եկեղեցիէն ելար եկեղեցին դառնաս:»

Փառքի ու պատուի պողոտաներէն հեւ ի հեւ վազելով յոգնած Հայուն վերջին հանդրուանը իր աղքատիկ ժամն է: Ժամն է սրտցաւ մայրը որ իր ջանջախուած դաւակը գրկին մէջ կը սղմէ, ու «հայրենիքին պտակովը» կը մխթարէ անիկա:

Երբ Նուպարի դագաղին առջեւն անգլիական զօրքն էր որ կը նուազէր մեռելական քայլերգը, ան բոպէին ալ յիշեցի ումբը որ Ալեքսանդր Բի հետ ջանջախեց ուստական սահմանադրութեան յոյսը. եւ կը հարցնէի ինքնութենս՝ իրենց բոլոր հանձարովը ինչ ժառանգութիւն կը թողուն Նուպարները, Մէլիքոֆները: Եզիպտոս՝ անգլ.

լիական նահանգ մը. Ռուսիա՝ աւելի քան երբեք բոնապետական: Փորձառու խելացին ան քաղցրանուշ յոռեսեսը չէ՞ր որ դարեր առաջ մելամաղձօրէն կը վուլուէր. «Ու ես իմ ձեռքերուս ամէն գործերուն, ընելու համար «իմ քաշած աշխատանքիս նայեցայ, եւ ահա ամէնը ունայնութիւն եւ հողի տանջանք էր, ու արեւուն տակ օգուտ մը չի կար:»

Փառք ու համբաւ հարամ կ'երեւին անոր որ Քալուրի մը հանձարը, Պիզմարքի մը գորութիւնը կը զգայ ուղեղին մէջ, ու ո՛չ իտալիա մը կը թողու ետին, ո՛չ Գերմանիա մը: Մեծ դժբաղդներուն մէջ չենք կրնար դասել Հայը որ գիտէ թէ իր միտքը արտակարգ ուժ մը ունի քաղաքացիութեան համար, եւ սակայն ինչ ընէ: Ո՛ր հայրենիքին արեւը որ միայն կ'ուռնացնէ հանձարները: Բունուեր թողուն է Հայը, հողմալար կ'երթայ կ'իյնայ Բեղրպուրկ, Գահիրէ, Պոլիս. միաքը սնունդ կ'ուզէ, եթէ ոչ պիտի հիւծի. անիկա կը կշտացնէ: Եւ օր մըն ալ կը զգայ թէ «բոլոր աշխատութիւնները մտքին համար եղած է, բայց սիրար չի կշտանար:»

Սովատանջ սրտով Բարիկ մեկուսացաւ պետական մեծ Հայը: Մեր պատմութեան սրտայոյզ դրուագներէն մէկն է Վահան Գողթնացիի Պաղտատէն վերադարձը: Հայ իշխանագունը տղայութեանը գերի տարուած էր ամիրաներու աշխարհը. իսլամական զենին մէջ մեծնալով բարձր պաշտօններու եւ փառքի կը տիրանայ. օր մըն ալ ահա Հայրենիքին յիշատակը սրտին մէջ կ'արթննայ: «Օտար եւ թանձր զեն մը իր ծննդեան եւ մանկութեան «սուրբ կրօնքը պատեր ծածկեր էր ամպի պէս, կ'ըսէ Ալի-«շան, սակայն քրիստոսածին աւազանին շնորհքն, իր հօր «ծննդեան արիւնէն աւելի՛ նահատակութեան սուրբ արիւն «նը եւ ընտրեալ հողույ մը յաղթական եռանդն, այն «թանձր ամպերը պատռելով զուրս ցոլացնէին ազնուա «փայլ նշոյլ մը:» Այսպէս օտար աշխարհ ինկած, օտարին փառքերովը յղիացած գաղթականներ են Նուպարները: Հօրենական ազնուազգի արիւնը, ու հիմա անկէ աւելի ազգին նահատակութեան սուրբ արիւնը օր մը կը փարատեն թանձր ամպերը ողոնք հայրենիքի հորիզոնը անոնց աչքերէն կը ծածկէին: Ու վշտահար սրտով կը զողողան ի տես հայրենիքի աւերակներուն որչափութեան. եւ դարմանը կը խորհին:

Հայրենիքէն վտարանդի երեք հայ ծերունի Բարիկ կը գտնուէին ԾԾի ամառը, փաշա մը, խան մը, ասպետ մը: Յունիսի օր մը Պուասիէն փողոցը, Նուպարի տունը երեքը մէկանդ եկած իրարու կը նայէին տրտում աչքերով: Հայաստան արիւնի մէջ էր, եւ նահատակութեան սուրբ աւինը կ'եռացնէր ծերունիներուն գրեթէ պաղած շարիւնը: «Մենք ալ Հայ ենք եւ սակայն ինչ ըրինք մեր ազգին» կը հարցնէին իրարու փաշան ու խանը: Թանձր ամպը կը փարատուէր: Ալ բան մը ընելու ժամանակը չէ՞ր արդեօք: Երկար խորհրդակցութենէ յետոյ կ'որոշեն իրենց տղանը հայ ժողովրդին փրկութեանը սպասարկել: Ասպետը, Զոնդ, պետական երկու Հայոց ձեռքերը իրարու մէջ կը

գնէ, եւ նահապետական օրհնութեամբ «Աստուած հե-
տերնիդ ըլլայ, փրկեցէք ազգերնիդ» կը մընջէ գողգոզ-
ցող ձայնով մը: Երեքին ալ սիրտը փղձկած է, երեքին ալ
աչքերը լեցուած են: Մխիթարուած են սակայն ու զօրա-
ցած, վասն զի նպատակ մը կ'առաջարկէին:

Ուշ էր: Քանի մը օր ետքը Վասպուրականի կոտո-
րածին բօթը կը հասնի, հտեւէն օգոստոսեան աղէտքը:
Ծերունիները շուարած կը մնան: Եթէ մաքերնին գեռ բա-
ւական զօրեղ էր, բայց իրենց հոգիին մէջ չէին զգար այն
ջլապինդ կորովը որ կ'ելեկտրէ միտքը եւ «անկարելի է»
բացատրութիւնը կը ջնջէ: Ինչչափ ճշմարիտ է պատուի-
րանը. «Քանի որ ժամանակը ձեռքերնիդ է օգտուեցէք»:

Այդ ճշմարտութիւնը ըմբռնեց Նուպար. զգաց թէ
ժամանակը անցած էր, այլ եւս իր հանճարը, իր համբա-
ւը պիտի չկրնային քաղաքական ծառայութիւն մը մա-
տուցանել իր ազգին: Ապագան պատրաստող երիտա-
սարգութիւնը պիտի ըլլար, արի երիտասարդութիւն մը,
տաղանդաւոր երիտասարդութիւն մը: Իր մեծ հրճուանքը
եղաւ եւ յուսալիր զօրովիզը գտնել Բարիզ երիտասարդ
սրտեր ու մտքեր որոնց նմաններուն կ'իժէ տասնեակ տա-
րիներ առաջ հանդիպել՝ թերեւս հիմա ուշ մնացած պիտի
չըլլար: Իր հովանիովը համապարփակեց այդ երիտա-
սարգները որոնց վրայ կը յառնէին խանդաղատանքով իր
բարի եւ գորովալիր աչքերը: Անոնց մեծ հայրն էր, ու
ճամբան ցոյց կուտար, որմէ պէտք էր ընթանային: Հա-
ւատարիմ ժառանգորդն էր իր մեծ հօրը որուն խոհեմու-
թեան համբաւը հռչակաւոր եղած էր, «Արին խոսքով եւ
խոհեմն Նուպար», ինչպէս կը գրէ Չամչեան: Ինքը երի-
տասարգներուն գործնական քաղաքագիտութեան գասերը
կուտար, ու անոնցմէ իրեն կը ներշնչուէր իմանդալատու-
թեան աւելնը, որ ստուելու մօտ սրտին կենդանութեան
շունչը կը փչէր: Նաբոլէոնի փառքերը երգող Ֆրանսացի
մեծ բանաստեղծին տաղերուն մէջ էն սրտայոյզներէն է
թոններուն աղաչանքը իրենց մեծ հօրը.

— Պապիկ, անոր քաջութիւնները պատմէ մեզի:

Ծրջինք զերերը, եւ մեծ հայրն է որ կ'ըսէ իր թոռնե-
րուն, Չէյթունէն եկողներուն.

— Զաւակներս, անոր քաջութիւնները պատմեցէք
ինծի:

Ու Ապահի վազրի աչքերուն մէջ ցոլացած կը տես-
նէր պատկերը հայ քաջորդիին, եւ Աղասիի ձայնին մէջ
կը լսէր մեր լեռները գոռացող յաղթական շիփորին ար-
ձագանգը: Ու այդ ընդհանրուն սիրտը կը տրոփէր, աչ-
քերը փայլահնացայտ կը վառէին, հայ արիւնը կ'եռար կը
զեռար երակներուն մէջ. պատերազմի նժոյզն էր որ կը ու-
ռի փողին ի լուր գափը կը հատանէ, պիտի սուրայ, պի-
տի սլանայ, բայց ծերութիւնը ոտքերը կը բռնէ:

Այդ յուզումներէն յոգնած, պարտասեւալ կը հանգըս-
տանար տաղանդաւոր երիտասարդներու հետ խօսակցու-
թեան մէջ: Այդ հոյակապ անձնաւորութիւնը որուն ա-
նունը պատկառանքով կը յիշատակէր ամբողջ Եւրոպան,
ինքն ալ յարգանքի փաղաքշանքով կը սիրէր, կը պատ-

ուէր հայ տաղանդը: Գրական տաղանդի համար Նուպար
փաշայի ցոյց տուած մեծարանքը անոր մեծութեանը ու-
րիշ մէկ ապացոյցն էր: Ներելի չէ՞ր արդեօք կոնքուրի
սխալել եւ իր օրագրին մէջ յիշատակել Նուպարի մասին՝
«Եւրոպացի մը զոր Արեւելքը իւրացուցած է»: Ինչպէս
մտաբերել որ արեւելցի մը կրնար Եւրոպան այդքան խ-
րացնել:

* * *

Այդ արեւելցիի գերեզմանին վրայ երբ ասիացի Հա-
յուն հետ Արիկեցիին ալ ու Եւրոպացիին ալ համակրան-
քի եւ պատկառանքի պսակը կը դնեն, կը խորհէի թէ այդ
դադարին առջեւ այսօր ինչ պիտի խօսուէր արդեօք եթէ
վաթսուն տարի առաջ առաջատանաւոր Իզմիրէն փոխա-
նակ Ալեքսանդրիոյ նաւահանդիստը հանելու, Սթամպուլի
ժովածոցը նետած ըլլար երիտասարդ Նուպարը: Իրացնէ
մեծ դժբաղդները, որոնց մասին վերեւ կը խօսէի, այն
Հայերը չեն որ իրենց սեւ բազդէն կ'երթան կ'իյնան
Պապը-Ալիի հալոցը, ուր էն ուժեղ նկարագիրը, էն զօ-
րեղ միտքը կարգարի պէս կը հալի, կը լուծուի: Օտեան-
ներ, Տատեաններ արդեօք Նուպարեան համբաւով մը
աշխարհահռչակ անուններ պիտի չըլլային:

Կենթադրեմ որ կեսարիայէն եթէ Եզրիպտոս ինկած
ըլլար, մեծահռչակ անուն մըն ալ պիտի վայելէր ա՛ն ու-
րուն համար Պրայս կ'ըսէր երկարատեւ տեսակցութենէ
մը ետքը. «Հայ ազգին մեծ պատիւ մըն է այսպիսի օ-
րէնսդէտ տաղանդ մը ունենալը»: Ու անոր գերեզմանին
վրայ եւ ոչ իսկ «օտար մարերն ու օտար քուրերը» լա-
ցին: Կոռելը նետուած սատակ մը: Ալի — երբեմն կարա-
պետ — Շահպաղի մահուան լուրը Արեւելքի ներքին
բամբին մէկ անկիւնը սքօզուած, սիրտս սեղմեց:

Ինչպէս համաճարակ քուրեային ատեն մեռնողին դիա-
կը հասցնեալ կը վերցնեն, կը տանին կը նետեն փոս մը,
ոարսափի այդ աճապարանքովը ամբան օր մը, տասներկու
տարի առաջ, հայ եկեղեցիէն գուրս ըրին կարապետ
Շահպաղը: Պատրիարքարանին բարապանները ձեռքեր-
նին տետրակ մը դռնէ դուռ վաղվառելով կրօնական ժո-
ղովին անգամներուն քուէն կը հաւաքէին ի նպատակ
նպարանքին: Ինչ պէտք Համագումար ժողովի, օրէնքի,
արդարութեան: «Մեծ չարիքներուն դէմ մեծ դարման-
ները» ըստուած է: Հայաստանեայց եկեղեցիին ահեղ վը-
տանգ կը սպանար: Դեռ կ'իյնը ողջ, ու Շահպաղ կարա-
պետ նորէն ամուսնացած էր: Մեր եկեղեցականները ի-
րենց խղճահարութեան շուարումին մէջ մոռցան մտքեր-
նին բերել թէ նոյն իսկ ապօրինաւոր ամուսնութիւն մը
կատարելու համար Էրիվմարդուն քով կ'իյն մըն ալ պէտք
է: «Փնտոցէ՛ք կ'իյնը» գոնէ այս պարագային մէջ շատ
հասարակ տեղիք մը չէ: Ու քահանայն: Ամուսնութիւն
մը լուծելու համար գէթ այդ ամուսնութիւնը նախ կա-
տարուած ըլլալու է. ու մեր մէջ առանց տէրտէրին օրհ-
նութեանը եւ ոչ իսկ բանադրանքի արժանաւոր ամուս-

նութիւն մը կրնայ կատարուիլ: Միւր Եազպազի կրկնա-
մունտութեան պտակադիր քահանան: Աս անհարկի տա-
րակուսանքներուն մէկ պատասխան մը միայն կար. « Ինչ
ալ բարակները կը փնտոէք: » Նուրեան կը գոչէր. « Բա-
նազարանքս կ'ուզեմ. հաշուեփակի մը սպոտին համար
պէտք ունիմ: » Վարչութեան պետն էր, ուստի եւ եկեղե-
ցին իր արամազրութեան աակը: Եազպազ ե ոչ իսկ կըր-
նար ինքնարդարացումի մեծ փաստին դիմել գոչելով.
« Բայց ես ազգին ինչ աղէկութիւն ըրած եմ որ կ'ուզէք
ինծի անպատճառ չարիք մը ընել: » Օ՛հ, անխոհեմութիւն
ունեցած էր 30,000 ոսկինոց կարկուրեան գատը Երու-
սաղէմի հայոց վանքին շահեցնելու գործին հզօրապէս
նպաստելու: Պատիժը պէտք էր քաշեր նոյն իսկ Երուսա-
ղեմացի Յարութիւն պատրիարքի ձեռքէն:

Բանադրուած իրիկունը երբ այդ մեծաշուք գատաւորը
Քատըղեղի նաւամատոյցը ելլելով իր ամէն օր վարձած
կառքերէն մէկուն կը մօտենար, հայ կառապանը առանց
զոնակը բանալու սովորական փութկոտութեանը, « Հայ-
տէ՛, ճամբադ գնա՛ » կը մըմայ: Ժողովուրդն էր անիկա:
Գլուխը կախ յառաջացաւ ան մարդը որուն առջև Հայուն
հետ թիւրքն ու Երուսաղեմի ալ կը խոնարհէին: Միւս օրը
խալամացած էր:

Վեց եօթը ամիս ետքը Ծնունդին իրիկունը Օրթա-
զեղէն շոգենաւ կը նստէի Վերին Վոսփօր երթալու. մրտ-
նելով քովընտի խցիկ մը հոն գտայ Ալի Եազպազը. դէմքս
անձանթ էր իրեն, ո՛ր եւ է խօսակցութիւն չբացուցաւ
մէջերսին: Անկէն մը քաշուած կը դիտէի այդ ցաւազին
դէմքը, խորունկ թաղմութեամբ մթապնած: Ան օրը ձիւն
էր եկած. Վոսփօրի բլուրները, տուները ամենքն ալ ճեր-
մակ էին. հանգարտ բնութեան վրայ վերջալոյսին տըրտ-
մութիւնը կը հանգչէր: Երգենաւը կը յառաջանար լու-
թեան մէջ. երեսը պզտիկ պատուհանին դրած Եազպազ
կը մնար վերացական: Չէր խորհէր, կը զգար. առաջին
Ծնունդն էր:

Ինչ որ ալ ըլլայ ժամանակին մեզի բերած գաղա-
փարներուն նորութիւնը, բայց Հայուն՝ անոր որ հայրենի
բունը մեծցած է՝ սրտին մէջ խորշիկ մը կայ ուր կը մրա-
փեն կրօնական կեանքի հետ կապուած յիշատակները:
Տխրութեան օրերը անոնք կ'արթնան ու կը տանջեն
հոգին: Խալամացած Հայը այդ բոպէին կը յիշէր, ասոր
տարակոյս չունէի, զաւակները, եղբայրները, կիներ որոնք
Ծնունդ կ'ընէին լալով: Հոգիին մէջ կ'արթնային նիր-
հած արձազանգները « Խորհուրդ Մեծ »-ին, ու կը յիշէր
մանկութիւնը, երկիրը, ժամէն խթումի իրիկուան դարձը,
հօրը մօրը ձեռքերուն համբոյրը, Երոզաւոր Ծնունդ ու
Աստուածայայտնութիւն մաղթանքը: Հիմա ամենքը նո-
րէն իրենց Ծնունդը կ'ընէին, ու ինք զատուած, անշատ-
ուած մէկզի նետուած էր:

Երգենաւը զարնուեցաւ նաւամատոյցի մը. քաւառօղը
խցիկին դուռը բացաւ ու « Էմիրկէն » ձայնեց. երազողը
սթափեցաւ, զուրս հլաւ:

Խալամացած այդ Հայը իր նոր կրօնքին մէջ կը ներ-

կայացներ հոգեկան երեւոյթ մը որ ցեղային արեւնի ազ-
գեցութեան վրայ մտածել կուտայ: Տաք սրտով կապուե-
ցաւ իր նախկին կրօնակիցներուն: Թիւրքը կ'արհամար-
հէր, ու անոր դէմ կը խրոխտանար: Կրօնափոխութեամբ
արդեօք աւելի ազամ կը զգար ինքզինքը իր բոլոր դա-
նութիւնը յայտնելու սիրապետող ցեղին դէմ: Թիւրքը
իր ներքին կեանքին մէջ աւելի մօակն տեսնելով իր ցե-
ղին գերազանցութիւնը բազաւորութեամբ չզգաց:

Վճռարեկ ատեանին անգամ էր Եազպազ. ու իրեն
հայասիրութեանը կը դիմէին Հայաստանցիները որոնք
տեղական գատարաններէ իբր քաղաքական յանցաւոր կը
գատապարտուէին: Պոլիս Գարաբէօյի հրապարակը 1896ի
ամառը սպաննութիւններ եղան. Հայերը ըկվովկրով զար-
կին մեռուցին ոստիկան մը. երկու տէրքօր բռնուելով
մահուան գատապարտուեցան: Դիմում վճառեկ ատենին
ուր Ալի Եազպազ երկսայրաբանութեամբ մը իրեն պաշ-
տօնակից գատաւորները նեղ վիճակի մէջ կը ձգէ: Ոս-
տիկանը մէկ գնտակով մեռած էր, ու մէկ գնտակը մէկ
հոգի միայն կրնայ արձակել, եւ ոչ թէ երկու. հե-
տեւաբար բռնուողներէն մէկը իբր մարդասպան նկատե-
լու էր, եւ միւսը՝ լոկ մեղսակից, ուստի եւ պատիժներն ալ
անոր համեմատ սահմանելով: Մարդասպանը մահ-
ուան կը գատապարտուի, մեղսակիցը՝ ժամանակաւոր
բանտի:

Տրամաբանութիւնը ճիշդ էր, բայց ճիշդ էր նաեւ իս-
լամ՝ գատաւորներուն տրամաբանութիւնն ալ. « Ալի է-
ֆէնտի Հայ է մնացած, անոր համար ասանկ բաներ կը
մտմտայ. մեր միտքը ինչո՞ւ չիյնար ասանկ բան մը: »
Անմիջապէս սուլթանին տեղեկութիւն կը տրուի թէ Եազ-
պազը միշտ Հայ է, եւ յեղափոխականներուն ալ բարե-
կամ:

Իր ցեղին տառապանքները կը կսկծացնէին սիրտը ու
երբ առիթը ներկայանար նոյն իսկ սուլթանին դէմ թու-
նաւոր նենգութիւններէ չէր զգուշանար: Կոտորածներու
օրերն էին, եւ Պոլսոյ թերթերը կը հրատարակէին հան-
դարտութիւն ծանուցանող խաբեպատիր հեռագիրները:
Իրիկուն մը շոգենաւին մէջ բարձրաստիճան թիւրքեր կը
ինչդրեն Եազպազէն իրենց բացատրել թէ ինչ է թէլէֆօնը
որուն անունը կը լսեն ժամանակ մը ի վեր: Եազպազ
պէտք եղած տեղեկութիւնները կուտայ եւ կ'աւելցնէ. « Եւ
այսպէս Էրզրումի վալի փաշան իր տեղը նստած, բերանը
փողի մը կը դնէ, եւ Պոլիս ալ նորին վեհափառութիւնը
իր ախանջը կը գնէ այդ փողին կապուած ուրիշ փողի մը,
եւ ուղղակի կը լսէ վալիին ձայնը որ կ'ըսէ « ապեի շա-
նակեսեւ ասայիշ պիք քիմալ տըր » « շնորհիւ նորին վե-
հափառութեան հանդարտութիւնը կատարեալ է: »

Ու այդ առաջին Ծնունդի իրիկուան հանդիպումը յի-
շեցի, եւ այս բոլոր դէպքերը, երբ իմացայ թէ մահուանը
ժամերուն կիսն էր ուզած, զաւակները եւ « Հայ քահանայ մը,
հայ քահանայ մը » պաղատած է: Ինչո՞ւ չհատաւ: Մահը
մօտը զգացող սիրաբ կեանքին վերջին բոպէներուն կա-
րօտը կը քաշէ անոր որ կեանքի առաջին բոպէներուն

սէրն է եղած, մայրը, կինը, ժամը: Ու կը պատմեն թէ այլ դժբաղդ մարդը, անգամ մը արգէն Նուրեանէն սպաննուած, հիմա Թիւրքերն ալ ձեռքովէն խեղդամահ ըրեր են. հոգին փրկէին պիտի, այն հոգին որ Հայոց եկեղեցին իր բանադրանքովը կորսնցնել սուղած էր:



Ու այդ դաբաղին շուրջը չգնաց Հայ մը դնելու « այն պարզուկ, աղքատիկ պոսակը, զոր ծաղկավաճառը չի ծախեր:» Եւ սակայն անդին հայրենի երկիրը չկա՞յ տուն մը որ Շահպաղի պարսական ըլլայ իր մէկ զաւակը, չկա՞ն Հայեր որոնց տառապանքները կարծցան Շահպաղի սրբացաւութեամբը:

Եւ սակայն ժողովուրդը այդ պոսակը կը զլանայ: Իր սրտէն բղխած ձայն մը կ'ազդարարէ թէ « հայրենիքի աղքատիկ պոսակն անգամ » անոր պէտք է պահէ որուն հոգեկան ուժը կ'ամբաստնողէ իր ձեռքը եւ թող չի տար որ Հայուն խաչը անկէ իսլամին ոտքին տակը իյնայ, նոյն իսկ երբ իր ազգը, իր եկեղեցին իր ձեռքերը ծակծկելով արիւնոտելով ուժաթափ ընելու սքնին:

Ազգէն բղխած անիրաւ հալածանքի մը համար ազգը սուրանալը հոգիի տկարութիւն կը նշանակէ: Ազգ մը երբ կը հալածէ իրեն բարիք ընող իր զաւակները, ատով զէպի կորուստ չի դիմեր. բայց երբ ներդրամիտ կը գտնուի անոնց որոնք ազգային անիրաւութեան չտուկալով ուրացեր են ազգերին, ան ատենն է որ փճացումի ճամբուն մէջ կը յառաջանայ, վասն զի տկարութիւնը կը պոսակէ: Ինչպէս ժողովուրդներն են մանաւանդ որ բարոյական ուժը պաշտելով կրնան սեւել:

ՀՐԱՋԴԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷՁԵՐ

ՀՐՈՍԱԿԻ ՍԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՆ

Ը

Պաշարումի վիճակ. — Հանդիպում. — Հրաժեշտ եւ մեկնում. — Լեռներէն ձորերէն:

Ամբան վերջին ամիսն էր, Թիւրքական վաշտը փոքր-Արմուտանի խաչի-զար բարձունքը վրանահար կը հսկէր: Թշնամիի կանոնաւոր բանակի մը զէմ կոտելու պատրաստութեամբ եկած էին զօրքերը, իրենց զլուխ սնննալով հարիւրապետ մը, երեք յիսնապետ, քանի մը չափուշ եւ բժիշկ մըն ալ:

Արմուտան ճամբարի մը երեւոյթը առած էր: Աստուծոն,

կէս օրին, իրիկունը կը լսուէին փողի ձայները որոնց Արմուտանցիները վարժուած չըլլալով, առաջ սրտերնին միշտ թունդ կ'ելլէր, բայց հետզհետէ ընտելացած էին: Փողահարութիւնը զինուորը աղօթքի կամ ճաշի հաւաքելու օրէնք ըլլալը հասկցան: Գոռուժը սակայն երբեմն արտասովոր կը դառնար, զեղը խուզարկութեան, կալը երթալով զինավարժութեան, կամ լեռ մը պաշարելու համար յանկարծական նշան տրուած ատեն, ան ատեն ահուկոյրի մէջ կ'իյնար ժողովուրդը:

Կատարեալ պաշարումի վիճակ: Աղջիկները, հարսերը կը վախնային աշխատանքի համար զեղէն զուրս ելլել: Հայոց մրցեղէնը, լաւ բերքերը զինուորները ուղածնուն պէս կը վայելէին:

Հրոսակներուն ձերբակալութեանը համար տեղական իշխանութիւնը իր բոլոր ջանքերուն ապարդիւն մնալը տեսնելով, յուսաց անօթութեամբ անձնատուութեան հարկադրել անոնք. այս նպատակաւ ամէն տեսակ խոտութեան ձեռնարկեց որպէս զի արդիւն անոնց ո՛ր եւ է ուտեստ հասցնելու փորձը: Գեղէն զուրս ելլողներուն պարկերը կը խուզարկուէին, եւ վաճ անոր որուն ախորժակը կը հրապուրէր զինքը հացին քանակը փոքր ինչ հաստացնել. ամենախիստ քննութեան կ'ենթարկուէր: Նմանապէս ամէն օր երկար բարակ կը քննուէին անոնք որ լեռները գործաւոր ունենալով անոնց հաց տանելու պարտաւոր էին: Ողորմելի Թիւրքերուն մաքէն չէր անցնէր թէ այդքան խռտօրէն իրենց փնտռածներէն մէկը հիմա գեղին մէջ պահուլտած պատուհաններէն զիրենք կը դիտէր. ու միւսներն ալ առանց թշնամիի գնտակին, իրենց ուժբութիւն վերաւորուած կը ջանային դարմանուիլ:

Սարսափի այդ միջոցին ձին հեծած Արմուտան մտաւ Քեմալի առաջնորդը Վարդան վարդապետ, 70 տարեկան քաջաոգջ կտրիճ մը, նախապէս քահանայ ու յետոյ երէց: Կնոջ վախճանելուն վարդապետացած: Արմուտաններուն ալ հովիւ էր, ուստի եկաւ կացութեան դարման մը խորհի, ու մանաւանդ Պէյլերեանը եւ պատուելին փախցնելու աջակցի: Ճիշդ այդ միջոցին ալ Պէյլերեան Արմուտան մըտաւ, Թիւրք զինուորներուն աչքին առջեւէն սահելով: Վիրաւորուած ճիւղից, որ ապաքինած էր, Հրանտին հետ ուրիշ գաւառ մը խրկելէ յետոյ ինքը Արմուտան մըտաւ Պատուելիին հետ վերջնական կարգադրութեան մը նպատակաւ: Գրկախառնուեցան տան մէջ. աննկարագրելի քաղցր վայրկեան մը եղաւ այս հանդիպումը, այնքան զէպքերէ ետքը. բայց անցեալը մոռցան ու ապագային ծրարազիրը պատրաստեցին: Եւ այդ միջոցին սնեցիկները լրօնիկ մեջիկ արցունք կը թափէին. զիտէին թէ աս վերջին ու վերջին տեսութիւննին պիտի ըլլար. վարդապետը ի մացուց թէ հալածեալները Ռուսիա անցնելու պիտի յաջօրի: Բաժնուելու տեսարանը սրտաճմլիկ եղաւ. մայր, քայր, կին կուլային կ'ողբային իրր թէ դաբաղներ զուրս կը հանէին տունէն: Կը խաբուէին իրենց տխուր նախազգացումներուն մէջ: Հրոսակները մնաք-բարոյիւն ըսին ու մեկնեցան:

Երկուք էին: Եկէն Պաղտասար Պէյլերեանի հետ միասին Արմուտան եկած էր, բայց ճամբան ուզելով Մեծ Արմուտան, իր զեղը, հանդիպել, որոշեալ ժամուն չկրցաւ հասնիլ, ուստի Պատուելին եւ Պէյլերեան ճամբայ ինկան: Գեղէն անվտանգ հեռանալով ձեռք առին Հասան Օվայի ճանապարհը, ու տխրութեամբ յիշեցին ամիսներ առաջ իրենց փախած օրերը: Վեց ընկեր էին ան ատենը, ու հիմա երկու միայն մնացած: «Պատերազմի դաշտէն, կը գրէ Պատուելին, մեծ կորուստով յուսակտուր ետ դարձող զօրքերու պէս կը շարունակէին իրենց ճանապարհը. եւ ո՞ր. ո՞վ գիտէ, ո՞ր պիտի կրնային իրենց շունչը առնել. աստ ապագան անորոշ էր: Պատերազմէն յաղթուած դարձող զինուորը կրկին պատրաստուելու համար կը դառնայ բուն իր հայրենիքը, ապահով վայրը, եւ շունչ կ'առնէ. ասոնք աստ միթարութիւնը իսկ չունէին. եւ միշտ քալէ՛ ու քալէ՛ մինչեւ գտնես անյայտութեան մէջ քու հանգիստդ:»

Ճամբան Չուաձեղ աղբիւրը երկար նստան եւ շունչ առին. կը սպասէին Եկէն Պաղտասարին որ չէր ի գար. ու երբ ա՛լ յուսահատեցան նորէն ճամբայ ինկան: Եւ ահա դժբաղդութիւն մը որ ան պահուն ամէն բան մոռցուց: Պատուելին ոտքերը բռնուած էին. ա՛լ չէր կրնար քալել: Աշխարհի վրայ ունեցած բոլոր հարստութիւննին ոտքերնին էր, ան էր որ ամէն փորձանքէ զերենք պիտի տղատէր. այժմ անգամալոյծի պէս, ոտքերը փայտացած, առաջ նետուելու անկարող վիճակի մէջ էր: Գնալիքնին զառ ի վայր էր. Պէյլերեան բռնեց ընկերոջը ձեռքէն, զտորուելով պտորուելով հասան վերջապէս գետակը, ուրկէ շալկելով անցուց. կրկին նոյն ցաւերը անկէ անդին ալ: Արշալոյսին հասան որոշեալ զեղը, որոշեալ տունը: Հոն շատ դարձաններ ըրին, աղ խարելով ծունկերուն կապեցին տաք տաք եւ տան մէջ քալելու փորձեր կ'ընէր միշտ: Երկու օրէն, երբ քիչ մը լաւացաւ, ճամբայ ինկան առաջնորդով մը, զիշերը նշանակուած վանքը հասնելու: Դժբաղդաբար կէս ճանապարհին ստեղծ նորէն սկսան ցաւիլ եւ որոշեալ ատենին չկրցին հասնիլ. ցորեկը անցուցին քարի խորշի մը մէջ ծարաւ, թէեւ քիչ մը վար քարերէն հոսող առուակ մը անուշիկ ձայներով կը վազէր դէպի ձոր: Արեւուտեղին տեղերնուն ելան, ու թէեւ երկու ժամէն պիտի հասնէին բայց խոտորնակի ճամբաներէ ընթանալով վեց ժամէն հասան:

Կէս զիշերուն մտան զեղը ուր առաջնորդնին տարաւ զիրենք տէրտէրին տունը: Դուռը կը զարնեն բացող չը կայ. սնեցիները կ'արթնան, դրան ետեւ կուգան ու չեն բանար, մանաւանդ երբ կը հասկնան թէ փախստականներ են. «քահանան հոս չի կայ» կը պատասխանեն: Հըրոսակները չէին կրնար զուրսը մնալ. հրացանի կոթով սկսան դուռը ջախջախել, եւ ա՛լ սպառնալիքի տակ տնեցիները ներս առին ասոնք. աղմուկէն արթնցեր էին մտականները գանուող տան մը բնակիչները, ինչ որ վտանգաւոր էր:

Երբ ներս մտան ա՛լ գործերնին լաւ էր. Տէրտէքը

անկողնէն ելաւ, «Աշիշը երեսիդ մեռնիմ անուշիկ Աստուած, ըսելով. աս ինչ շարժարանք է որ քաշել կուտաս աս երիտասարդներուն.» տնեցիք բոլորն ալ ոտքի վրայ էին, երեսունի չափ, ծեր, երիտասարդ, երախայ, ու ասոնցմէ զատ ուրիշներ ալ պանդուխտ կը գտնուէին ուրիշ տեղ: Ահա զեղին հայկական տունը:

Հիմա ասոնք ամենքը փախստականներուն շնորքը առած ճոխ սեղան մը պատրաստեցին. շատ սեր ու մեղրի զլաններ ճաշելէ վերջ, փախստականները ըսին թէ «ցորեն կը հոն մնալու դիտաւորութիւն ունէին, բայց դուռը ուշ բանալով զրացիները արթնցնելու պատճառ եղան, ուստի հիմա իրենց համար վտանգաւոր էր եւ պէտք էր տեղերնին փոխել:» Տնեցիները իրենց հիւրերը հանեցին սուննէն եւ առաջնորդեցին գեղէն դուրս դէպի ձորը: Մտան ոչխարներուն փարախը որուն շնորքը ածուններ ալ կան. բոլոր այդ տանը կը պատկանին: Չորին մէջ ալ հազարներով բարտիններ ունին, որ մեծ հարստութիւն է իրենց համար. ձմեռը աստ բարտիններուն ոստերէն կը պարենաւորեն ոչխարները: Յորեկը ճամբեցին առաջնորդնին: Հիւրընկալ տան արու եւ էջ անդամներուն կէսը եկած էին ածունները աշխատելու. միշտ փախստականներուն քսմէ էին եւ թող չէին ի տար որ քիչ մը քնանան: Ամէն ժամ մրգեղէն, ուտելիք կը բերէին: Շատ ուշադրաւ էր մայր եղող կիներու գորովը: Իրենց զաւակներուն պէս կը դուրսդուրային այս փախստականներուն վրայ, ու շատ հարցումներով ալ անհանգիստ կ'ընէին, «Հիմա ձեր մայրերը ինչպէս կը զիմանան» ըսելով: Հարսերը կը կըրկնէին. «Հիմա ձեր կիները ինչ վիճակի մէջ են:»

Իրիկուան մօտ տէրտէքը եկաւ. առաջնորդ մըն ալ բերաւ մինչեւ որ իրենց սահմանուած տեղը հասնին: «Խաչհանգիստ մըն ալ ըրի, ըսաւ, ու Ս. Խաչին զօրութեամբ անվտանգ կը ճամբորդէք:»

Մեկնեցան. ճամբան շատ մը փորձանքներու, մալուրումներու, դժբաղդութիւններու, վտանգներու հանդիպելէ ետքը, լեռներ ու ձորեր թափառելէ յետոյ, վերջապէս զիշերը հասան հայ զեղ մը. առաջնորդնին դնաց քահանային խօսելու, եւ հետը առած երկու երիտասարդ եկաւ: Փախստականները հիւրասիրուեցան քահանային տունը: Առաջնորդնին ալ ձեռք գնաց:

Տէրտէքը իր հիւրերուն ուր տեղացի ըլլալը չէր դիտեր, եւ երբ ո՛վ ըլլալնին իմացաւ, ա՛լ շատ համակրեցաւ. ու սկսաւ խօսիլ:

— Աղպար, ըսաւ, ձեր ձայնն ալ ամէն կողմէ կուգայ. կը խնդրեմ ձեզը ըսէք, զուք ասկէ առաջ Սեպուհ Լուսաւորիչ զացած էք թէ չէ:

— Ո՛չ, պատասխանեցին:

— Ասկէ երկու ամիս առաջ, շարունակեց քահանան, ուխտ գացիք Սեպուհ ինչպէս սովորութիւն է ամէն տարի. վերադարձին լեռը դժբաղդութեան մը պատահեցանք: Թանակէն (կիրճի անուն է) ուխտաւորներով անցած պահերնուս, երեք չորս մարդ չէրբէզի լաթերով կանոնաւոր զինուած առաջնիս կտրեցին. քարերուն ետեւ անցնելով

«տավրանմայրն» ըսին. մեր տղաքները չընդունելով ատանարգանքը, զէնքով պատասխանեցին. անոնք ալ նեւտեցին, եւ մեր գեղէն մէկը վիրաւորեցին, որ մինչեւ հիւսիս կը դարձանուի: Այնպէս կարծիք մը կայ որ գուրջ եւ զած ըլլաք այդ բանը ընողը: Մէյ մըն ալ կ'ըստի թէ Ռուսիայէն քանի մը երիտասարդ զէնք փոխադրել ուզած են Երեզա եւ չյաջողելով լեռը թողած են, ու իրենք հիմա լեռները կը պտտին. եթէ իրօք գուրջ չէիք թերեւս անոնք ըլլան: Բայց ինչ զարմանալի բան է որ Հայը Հայուն գարնէ՛, ան ալ ուխտ գնացողները. մեղայ, մեղայ աս ինչ բան է. երբեք չեմ հաւատար թէ ատոնք այլազգ ըլլան. անպատճառ հայ են որ բուն գրած են վանքի մը շուրջը:» Բահանան խօսքը վերջացուց, եւ մէյ մըն ալ ատ բանին վրայ չխօսեցաւ:

Տեսնելով որ հրոսակներէն մէկուն անունը պատուելի է, ամբողջ օրը Աստուածաշունչէն հարցումներ կ'ընէր աւելի բան մը սորվելու համար. ստացած պատասխանները թէեւ զոհացուցիչ չէին երեւոյր բայց ինք զոհ կը մնար ու կը շարունակէր. չթողուց որ ուղեւորները քիչ մը քնանան, եւ մարդավարութեան ալ դէմ էր չպատասխանել ու քնանալ: Ամէնէն շատ Յոր Երանելիին գործերը հետաքրքրած էին խեղճ տէրտէրը, եւ արտասուաթոր աչքով միշտ ան մէջ կը բերէր, առանց մտածելու որ իր երանելի հիւրերը Յոր Երանելիէն աւելի տանջուած ըլլալով, քիչ մը քնանալու պէտք ունէին: Բայց քնատուութիւնը եւ յոգնածութիւնը յաղթեցին մարդավարութեան եւ քաղաքաւարութեան. մինչդեռ տէրտէրը հարցումներու հետ էր, անոնց աչքերը գոցուեցան. երկու ժամէն իրենց ձայն արուեցաւ. իրիկուան ճաշը ընելու ատենն էր. ըստ սովորութեան ԿԿին կը ճաշէն, եկեղեցիէն եկածնուն պէս: Ճաշէն յետոյ մեկնելու պատրաստութիւնը տեսան:

Եկաւ ժամանակը. տէրտէրը իր երկու կարիճ տղաքը շէշխանէներով զինելէ վերջ, փախստականներուն առաջը ձգեց, ու մասնաւոր աղօթքներով ճանապարհ գրաւ, «ուրիշ ատեն ալ կրնաք գալ. տունը ձերն է» ըսելով:

Ճանապարհը լեռնային էր. աս տղաքը քանի մը տեղ յիշեցին իրենց քաջութիւնները. թէ քանի անգամ քիւրտերը փախցնելով գողցած ջորի եւ ձիերը հտ առած էին: Բայց շատ քիչ կը խօսէին. երբ ո՛ր եւ էր զէպքի մը պատահած տեղ ըլլար հոն միայն կը յիշէին ու կ'անցնէին: Երբեմն ալ բլուրներու վրայ կը ցուցնէին որ շատ ուխտատեղիներ ալ կան:

— Ա՛յ գալիքնիս Եկեղեցաց գաւառն է, կ'ըսէին, որ իր անունը առեր է եկեղեցի անունէն. սուրբ Լուսաւորչի կոխած ու պաշտած տեղերն են: Այժմ ամէն տեղ ուխտատեղի է. թօրթանը մօտ է, եւ ինք սրբոց գերեզմանը հոն. Աւագ վանք մօտ, Սեպուհ—Լուսաւորիչ, սուրբ Հրեշտակապետ, Աստուածամար. եւայլն եւայլն:

Աս տեղերուն վրայ կարուկ տեղեկութիւններ կուտային, եւ հասան ձոր մը որ փոքր գետակ մը կը վազէր եւ քիչ մը վար կը խառնուէր ուրիշի հետ. երկու ժամ անդին կը թափէր Եփրատը, աս փոքր գետակին ջուրէն խմուցաւ:

առաջարկեցին, վան զի Սերովբէի վանքէն կուգար: Աւելի վար միւս ջրէն եւս խմել ստիպեցին. ատ ալ Սեպուհ Լուսաւորչի լեռնէն: Կուշտ մը երկուքէն ալ խմեցին. կեանք տուող ջրեր են: Չորը փոխեցին եւ մտան ուրիշ ձոր մը. անունը Կարիտիկոս էր, խոր ձոր մը սրուն մէջէն կը վազէր առուակ մը, չորս կողմը անտառ. եւ ձորը մտած տեղը փոքր գաշտ մը իբր պարտէզ, եւ փարսիններ որոնք իր չորս կողմի լեռներով Աւագ վանքի սեփականութիւնն են. ատկից մինչեւ վանք կէս ժամ հազիւ կը տեւէ: Պէյլալէրեան ատ ճանապարհը դիտէր, ուստի առաջնորդները ճամբեցին, որ չլուսցած տուն գտնան: Աս երիտասարդները չուղեղով գատուեցան. շատ համակրեցան ատոնց, եւ կ'ըսէին «Եթէ պէտք ըլլանք մեզի ալ կանչեցէք»: Խօսստում առին եւ ապա մեկնեցան:

Հոգ վանքի կալուածներն ըլլալով գարի, ցորեն եւ այլն յարգած տարուած էր վանք. միայն յարգերը կալին մէջ կը մնային. եւ փախստականները գացին յարգերու վրայ նստան, բաւական ատեն հանգստանալու եւ առտուան մօտ վանք երթալու համար:

Երկու փախստականներուն խօսակցութեան նիւթը միայն տէրտէրին այն խօսքն էր թէ անպատճառ Սեպուհ Լուսաւորիչ Հայեր կան փախստական: Եւ կը մտածէին թէ քանի որ իրենք չեն, ուրեմն ատ կողմերը անպատճառ բան մը կայ. շատ բաներ երեւակայեցին, եւ ուրախ էին ըսելով թէ անպատճառ հոս հանելուկ մը կայ որ քանի մը օր վերջը լուծուելու է: Աս ուրախութեան մէջ տաքուկ յարգին վրայ անուշ մը քնացան:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՄԱՐՏԻԿ ԱՂԱ

(ՉԼԵՊ)

Բ. Ե. Ի. Վ. Ե. Բ. Զ. Ի. Ն. Մ. Ա. Ս.

Պատմուած դէպքերէն ամիսներ վերջը՝ Ալեքսանդրիոյ սրճարանի մը մէկ անկիւնը, երկու հոգի դէմ դէմի նստեր կը խօսակցէին: Պատին առջեւ քանաբէկն վրայ նստողը չափահաս գիրուկ մարդ մըն էր, շուկացիի երեւոյթով ու դէմքով, մեծականջ, մեծաքիթ ու մեծապէխ: Նառիկէն ծխափողը պինդ բռնած, հեշտախանգ լեցուն ներշնչութեամբ կը քաշէր, զինով նայուածք մը երկարելով ծուխի առապեանքներուն ետեւէն որ օդին մէջ կը քաղցրուէին ծոյլ ու տարտամ: Երիտասարդ մը, նիհար ու բարձրահասակ, նստեր էր դէմը, լրագրի մը վրայ հակած խոշոր գլուխը, ուր սեւ ու խլտ մօրուք մը, անյարգար ու խառնաթել, վարդապետական կամ վանական խոժոռ պոստում մը կը

հայցներ առոյգ ու գունագեղ գէմքին, ամխացած յօնքերուն սակ կայծուրտող վառվառն աչքերով:

Միտղը յանկարծ անհամբեր ձանձրոյթի սրանեղ շարժում մը լպտտեց ազատ ձեռքովը:

— Է՛ ճանրմ, ձգէ՛ սա յրագիրը պէ՛, երկու զոյգ խօսք ընենք, մարդ Սասունոյ... Ըսաւ շուկացիներու այնքան յատկանշանական շեշտովն ու ձայնովը, ուր ուժեղ կուրդի իւզոտ ու պարարտ թաւալումներ կան, թաւ, թուխ ու լայն ելեւէջներ, որոնք, զիտողին համար, կը համապատասխանեն այդ մարդոց նստուածքին, սանկ երկու ոտքերը շեղ բացուած ու տարածուած, ու մէկ թեւը անոնց մէ մէկուն վրայ հանդած, անհոգ ու ինքնավստահ ուժի լընումով մը:

— Հիմա, հիմա, փութաց ըսել միւրը, սա երկու տողն այ կարդամ...

Մարդը, նեղացած ծամածուծով մը, գէմքը աջէն ձախ կիսաշրջեց, ու սկսաւ արագ արագ ծխել, կարծես համբերութեան շունչ աննկու համար: Քանի մը վայրկեան ետքը, երիտասարդը թերթը ծալլեց, մէկ կողմ դրաւ, ու աջ բազուկը մարմարին կոթնցնելով.

— Է՛ Գրիգոր աղա, ըսէ նայինք, խօսէ, մտիկ կ'ընեմ կոր...

— Ի՞նչ խօսիմ, կարդացողը ես չեմ գուն ես...

Երիտասարդը լռեց, մտքին մէջ ըսելիք բան մը փընտոնելու ձեռով:

— Հա՛, ըրաւ յանկարծ, զուարթ անակնկալի մը հանդիպող մէկու մը պէս, դտա՛յ, քեզի բան մը կարդամ տէ մտիկ ըրէ, շատ խնդաս պիտի...

Գրդանէն թղթերու խոնոտեղ մը հանեց, ու վայրկեանի փնտտուքէ մը ետքը, նամակ մը առաւ մէջէն, բազմաթերթ:

— Ի՞նչ է ատիկա, հարցուց մարդը:

— Է՛ֆէնտիմ, ըրաւ երիտասարդը խնդալով, ատիկա Բարիզի մէկ բարեկամիս ինձի գրած մէկ նամակն է: Գիտե՛ս ի՞նչ բանի վրայ է խնդիրը...

— Ինչէ՛ն գիտնամ:

— Սա ո՛ւր է հոս ատեն մը Մարտիկ աղա մը կար, վաճառական, և Դաշնակցականներուն մեծ բարեկամ:

— Մարտիկ աղա՛, ըրաւ մարդը վարանոտ, յիշողութեան հեռունքը պրպտելու ձեռով:

— Այո՛, Մարտիկ Սրմաքէշեան, հարուստ մարդ մը, որուն քթէն բոններ էր Սուրեան անուն մէկը, ամէն օր սրճարաններուն մէջ կը պոռար, կը հայհոյէր Հնչակեաններուն գէմ...

— Հա՛, սա մեր ծանօթ Մարտիկ աղան, հասկցայ, զէր, բարձրահասակ, ժանիքոտ...

— Ճի՛շդ ան... 4-5 ամիս առաջ Բարիզ գնաց Սուրեանին հետ, որուն իր աղջիկը կնութեան տալ կ'ուզէր... Իմացանք որ վերջերս հարսնիքն ալ տեղի ունեցեր է...

— Այո՛, այո՛, ատանկ բան մը իմացայ:

— Հա՛... ես ասկից ամիս մը առաջ այդ բարեկամիս բեր էի որ ինձի տեղեկութիւն սոյ այդ մարդուն վրայ,

ի՞նչ կ'ընէ կոր, ի՞նչ ջուրի վրայ է... աղջիկը փեսան ի՞նչ կ'ընեն կոր, որովհետեւ, խօսքը մէջերնիս, ես սօման մը զրելու միտք ունիմ այդ մարդուն վրայ...

— Հէ՛, ուսման մի...

— Այո՛, բայց մարդու չըսես հա՛, վերջէն գործս գէշ կ'ըլլայ... Արդ, բարեկամս ալ հետեւեալը գրեր է ինձի, մտիկ ըրէ՛... այնչափ խրթին գրուած չէ՛, կրնաս հասկնալ, աւելցուց երիտասարդը քմծիծաղով մը:

«Ուզեր էիր որ տեղեկութիւններ տամ Մարտիկ էֆ. Սրմաքէշեան ըսուածին վրայ, որ Բարիզ եկաւ ասկէց 5-6 ամիս առաջ, իր ընտանիքով ու փեսացուովը, հիմա փեսայ՝ Տեսայ, գիտեցի, ուսումնասիրեցի մարդը, ու շատ զուարճացայ, իբր թէ զաւելտական էջերու շարք մը կարգացած ըլլայի: Ի՞նչ շարք արդէն զաւելտական կենդանի էջերու, պատկերներու, այդ մարդը, բնութեան մէկ սրամիտ վայրկեանին հեղինակուած: Ի՞նչ կենդանի ծաղրանկար մեծ-մարդոչ, Թարթարէն (այսինքն Տօն Քիշօթ և Սանթօ Բանսա), Բոհուսով, Քալինօ մէկ հոգիի մէջ: Մեծ հաճոյքով կարդացի նամակիդ էջերը ուր կը ցուցնես թէ ի՞նչպէս Պոլիս մտնանդ թշնամի յեղափոխութեան և զայն մեր մէջ ներկայացնողներուն՝ Ալեքսանդրիա հասնելուն պէս, վախի և փառասիրութեան մղումներու տակ, յոտից ցլուտ Դաշնակցական կը դարձնուի, յեղափոխական կը միրտուի, եւ կը սկսի սրճարանէ սրճարան պտտցնել իր պոռոտ ու յաղթական սիլուէթը, Հնչակեանները ցեխի եւ Դաշնակցականները գովասանքի անուշահոտ իւզերուն մէջ թաթիւլով, իր պերճախօսութեան հետ քսակն ալ ի սպաս դրած յեղափոխութեան սուրբ դործին, հրապուրուած ապագայ փառքի չիլտեմ ինչ մերձակարէ մը զոր Սուրեան, ըսածիդ նայելով, փայլեցուցեր է անոր միամիտ ու խանդավառ աչքերուն: Բաւական թօհաֆ կերպով ցայտեցուցեր էիր Սուրեանին ու Մարտիկ աղային հակապատկերը, Սուրեանը՝ պաղ, հանգարտ, ջուր կարծես Մարտիկ աղային կրակ-խոնոտածքին քով, —ակապեմական իմաստակ լրջութիւն, դասական կանոնաւորութիւն, պաշտօնական հանդիսաւորութիւն՝ տօնավաճառի գերասանի գեհնիկ ու բուն կոշտութիւններու, զիւցաղնազաւելտական շարժումներու քով, խելք, հաշիւ ու շահ՝ երեւակայութեան, միամիտ հաւատքի, փառասիրութեան քով, —ինչպէս յափըշտակող ձեռքը բացուած գանձի մը, — նուրբ ու շարճանի գէմք, սեւ լաթեր, խնամուած սեղմ կոճկուած զգեստաւորում՝ մեծազանգուած գլխի, զիւ զոյներով՝ թափթփած հանդերձներու քով:»

— Աս ի՞նչ բաներ կը կարգաս կոր, ըսաւ Գրիգոր աղա, որուն գէմքը անհասկցողութեան ամէն նշանագրերովը կը կնճոտէր:

— Հիմակ կը հասկնաս, հիմակ, պատասխանեց երիտասարդը որ արդէն սահելով անցեր վերի տողերուն վրայէն:

«Ըսեր էիր թէ ի՞նչպէս Սուրեան յեղափոխականութեան շնորհիւ իր քսակին գործին հետ ուզելով սրտինն ալ կարգադրել, կը փորձէ եւ կը յաջողի Մարտիկ աղա»

յին աղջիկը հրապուրել, սիրոյ կոհները, պարտութիւնները եւ յաղթութիւնները նախագաս համարելով յեղափոխական կեանքի ներքին, և քաղցնի ամուսնութեան մը ապահով ու խաղաղիկ նաւահանդիսաբ՝ անոր ալէկոծ ծովուն։ Աղջիկը միամիտ, զգայուն ու անփորձ, Սուրբան սիրուն, համակրելի ու սիրահար, (այս բառը, բարեկամ, սովորական իմաստով չեմ գործածեր կոր. «սիրահար» կ'ըսեմ, ինչպէս կ'ըսեն գաշնակահար, կամ շուժակահար, այսինքն սէր գարնող, սէր անող,) գործը զիբաւ կ'եփի կը հատունայ։ Մարտիկ ազա, յեղափոխական մը, հերոս (կ'երեւայ թէ Սուրբան ինքզինքը հերոս կլլեցուցեր է անոր) մը իր բնասանքին մէջ ունենալու գաղափարէն շարժած, — առկէ աւելի ինչ մեծ երաշխաւորութիւն իրեն համար՝ ապագայ պատիւներու անլուպ վայելումին —, եւ հաւատալով թէ հայրենասիրական մեծ պարտականութիւն մը կը կատարէ, Աղզին մեծ ծառայութիւն մը կը մատուցանէ իր աղջիկը Սուրբանի տալով, խանդավառութեամբ կ'ընդգրկէ այս միութեան գաղափարը, ու զայն իրականութեան կը վերածէ, անմիջապէս, Սուրբանը, որ յեղափոխական ամօթածութեամբ խղճահար, չէր ուզեր Ալեքսանդրի մէջ կարգուիլ, հետը քաշելով բերելով հոս, Բարիդ, եւ մատուց մը խոթելով զայն իր աղջկանը հետ։

«Ըսեր էր որ դրուագներ պատմեմ։ Ահա իմ գիտցածներս։ Դեռ աչքիս առջեւ է թօհաֆ տեսարան մը. կիրակի օր մը Պուան գացեր էի պողոտի. մէյ մըն ալ նայիս Մարտիկ ազան գէմս ելաւ փորը առջեւը ձգած ու գլուխը ետեւ, զլսարկը ֆէսի պէս դրուած, սանկ ծուռ, մէկ կողմ, պիտերու առատ ալիքներ ուղտուքէն զուրս յորդած, շոգենախ մը քթէն քովերէն փրթող փրփուրի պատաններու պէս, ձեռքը հովանոցին վրայ՝ իրը մտկանի մը. աղջկանը՝ ու իր գաւազանին պէս շիտակ ու բարակ Սուրբանին մէջտեղ կանգուն յաղթական բարձրութեամբ իր հասակին, կը ճառէր Չաքմաքճըլարի կամակերթայի մը յորդառատ պերճախօսութիւնով, պատկառելի գլուխը խելագար շարժումներով ուժգնրեր, ձեռքի, հովանոցի եւ իրանի բուն շարժականութեամբ իր խօսքերուն պատկեր, մարմին, շեշտ ու ցցունք տալով։ Ատեն ասեն բացազանչութիւններ, քրքիշներ, — կիկլուպեան կոկորդէ մը գարնուած վիթխարի բաներ, — հսկայ թեւերու օդացունց բարտիւններով, զուրս կը պոթկային բերնէն, առշու՛թեան կամ հարցական կէտերու պէս անշարժ կեցնելով պատողները։ Մօտեցայ իրենց, հետաքրքիր, մարդուն ըսածը մտիկ ընելու համար։ Իր խօսքին նիւթը խանասորի կոհն էր, որուն լուրը դեռ նոր հասած էր Բարիդ։ Կարծես Տաճիկը հոգի տուեր եւ Հայը հոգի առեր էր։ Այդ պզտիկ կոխը հսկայ ճակատամարտի մը, և այդ պզտիկ յաջողութիւնը փառաւոր յաղթութեան մը զիւցազներգական համեմատութիւնները, շողշողուն գոյնները հազած էին իր երեւակայութեան խանդավառ քալիտօքօրին մէջէն։ Դրօշակեաններուն և Ֆէլայիներուն բոցեռանգ մէկ փառաբանումը կը փոզերգէր, Հայաստանի մօտալուտ անկախացումը կը հոչակէր, — հրաշալի Չաթիկ մը երկարահիւծ լացի-

զիշերէ մը ետքը— Տաճիկաստանի դամբանականը կը կարգար, Հնչակեաններու բարոյական չեմ գիտեր ինչ Սէն— Պարթէկէմի մը կը ծանուցանէր, բոլոր բաներ որ զինքը բարեկենդանի արարած մը կը դարձնէին, խօլ—զուարթ, խեղկատակ ու ուռուցիկ...»

— Ինչ է ճանրմ առտնք, ընդմիջեց յանկարծ շուկացին, սրտնեղ, բացատրէ նայինք քիչ մը...

Երիտասարդը նամակը վար դրաւ, սեղանին վրայ, ու ժողովրդական ընտանի բառերով ու բացատրութիւններով, աշխոյժ գիմախաղութեամբ, պատկերացնող շարժումներով, վերի հատուածը թարգմանեց մարդուն որ սկսաւ խնդալ լիակոկորդ։

«Կեցցէ՛ներ կը սլացնէր, իբր հըթիւններ, ի պատիւ Ֆէլայիներուն, նախատանքի լուտանքի թունալից նետեր կ'արձակէր Հնչակեաններուն — «Ասանկ բան մը ըրած, ընկիւք ունէ՛ր խայտառակները» — «Անկցի՛» ներ կը նետէր թիւրքիոյ, Համիտին, Տաճիկներուն, անդունդ մ'ի վար զլուրցնող կիցի հարուածներու պէս, կը խայտար, կը ճառագայթէր։

— Կեցցէ՛ Հայաստան, անկցի Տաճիկաստան, կեցցեն ֆէլայիք, անկցին թիւրքք, անկցի սուլթան Համիտ... Տաճիկին վերջը եկաւ, խերը անիծուեցաւ, լիցցաւ գործը... կեցցեն ֆէլայիները, հէ՛ Սուրբան։

«Սուրբանին գէմքը գիտեցի, հեզնոտ ժպիտ մը նշմարեցի հոն, շատ թեթեւ։ Օ՛ այդ ժպիտին կամիթը, խայթումը, գնդառեղի շար ու սուր հարուածը, պոռոտ խանդավառութեան տիկին քով որ կ'ուռնար, կ'ուռնար անվերջ՝ օդով, շունչով, խօսքով... յոյսով։ Բաւական հետեւեցայ իրենց, խնդալու մարմաջներ խղզելով, կլլելով, եւ համակրած, չիտեմ ինչու, այդ մարդուն որ զիս այնբան կը զուարճացնէր, այնքա՛ն։

«Ուրիշ դրուագ մը, զոր պատմեց ինձի Մարտիկ աղային սպասուսը, որուն հետ տեսնուեցայ, քեզի տեղիկութիւններ ժողովելու համար։ Գիտես սպասուսները որքան հետաքրքիր են, եւ հետեւաբար անզաղտնապահ, երկու դրացի, ազգական բաներ։ Քիչ մարդ կայ որ ազահ ըլլայ այս բանին մէջ, այսինքն գաղտնիք վատտիող, ժողովող ու միայն իրեն համար պահող, ինչպէս ազահը իր ոտկիներուն համար։ Գանք մեր պատմութեան, որ Ալեքսանդրի տեղի ունեցեր է, քու քթիդ տակը, եւ զոր չես գիտեր անշուշտ, քանի որ չես գրեր նամակիդ մէջ։ Սուրբանը, ինչպէս գիտես, յաճախ Մարտիկ աղային կ'երթայ եղեր, իր ցանցերը կամ ոտայնը լարելու համար աղջկան շուրջը. երկար բարակ կը նստի կը խօսի եղեր հետը, իր բանտարկութեան, իր յեղափոխական գործիչի կեանքէն զրուագներ պատմելով, սրտաշարժ կամ ահաբեկող տեսարաններ — մեծ մասամբ անշուշտ հնարուած — որոնք խեղճ միամիտ աղջիկը կը զողացնեն եղեր, վախի կամ յուզուած կարեկցութեան սարսուռներով։ (Սպասուսը ըսաւ ասիկա)։

«Արդ օր մը, աղջկանը մեծ մայրը կամ Մարտիկ աղային մայրը, ինչպէս կ'ըլլայ, յանկարծակի կը բռնէ

Սուրեանը սիրահարներու դասական գիրքին մէջ, աղջկանը առջեւ ծունդի, ձեռքը շրթունքին տանելու վրայ, խոնարհ ու պաշտող, Ռոմէոսական մեջումներով: Այդ կինը բնագոյմամբ կ'ատէ եղբր Սուրեանը, եւ տղուն բռնապետական կամքը միայն կրցեր է զանի իրեն հարկադրել: Արդէն ինք չերեւար եղբր, Սուրեանին տունը գտնուած պահուն: Բայց կասկածի եկած Սուրեանին յաճախակէպ եւ անժամանակ այցելութիւններէն, մանաւանդ երկար գլուխ-գլխիներէն իր թոռանը հետ, օր մը լրտեսելու կ'ելլայ: Եւ կը բռնէ, առանց բռնուելու, բանլիքին ծակէն: Ինչ ուրախութիւն. նախախնամութիւնը իրեն միջոցը կուտար Սուրեանը մէկէն անէն դուրս նետել տալու, Մարտիկ աղային իսկ ձեռքով, որ Պոլիս, սիրոյ մասին, կատարեալ Ժագօպէն մըն է եղբր:

«Արդ, ճիշդ յուսացածին հակառակը կը պատահի. Մարտիկ աղա կը բարկանայ, բայց որու զէմ. ո՛չ աղջկանը, ո՛չ Սուրեանին, այլ նոյն իսկ մօրը զէմ: Կոխ մը կ'ընէ ասոր հետ, փառաւոր տեսակէն, երեսին զարնելով իր նախապաշարուները, անձկամտութիւնը, կ'ըսէ թէ իրեն համար մեծ փառք մըն է որ յեղափոխական մը, հերոս մը իր աղջիկը սիրէ եւ կ'ուստան անէ, թէ պէտք է որ Ազգը իր աղջիկները արամպարութեան տակ ձգէ այն կարիճներուն օրոնք զայն փրկելու համար իրենց կեանքը կը վտանգեն, թէ... թէ... թէ... եւ աղջիկը կանչելով անմիջապէս, ապշած, զայթակղած մօրը առջեւ խօսք կուտայ ժամ առաջ Սուրեանին նշանել զինքը: Հարսնիքը տեղի ունեցաւ հոս, մեր մատուոխն մէջ: Հրախրեալներ չկային զրեթէ, այլ հետաքրքիրներ, որոնց մէջ ես, — որովհետեւ հոս, Մարտիկ աղա բոլոր «ջոջերուն» հետ կուտած թշնամացած է. գալով Սուրեանի ընկերներուն, ասոնք ալ նախանձէ մղուած կամ սկզբունքով, ինչպէս կ'ըսեն — երես վարձուցած են իրմէ: Բաղդաւոր մէկը շատել դմուար բան է, շիտակը...»

«Այ անկից վերջը Բարիզի հայ գաղթականութեան զլխաւոր զէպքերը, խօսակցութեան նիւթեղէնը՝ Մարտիկ աղային ճառերը, Մարտիկ աղային շարժումները, խօսքերը, Մարտիկ աղային կոխները, Մարտիկ աղային ձախողութեանն էին: Չմոռնամ բնելու որ հոս սրչափ հերոսներ կային գացին վրան թափեցան, փետտեցին, սոթթեցին զինքը ինչպէս ճնճողուկներու երամ մը պտղալից ծառ մը: Իր առատաձեռնութիւնը սակայն զարեցաւ մէկէն, Սուրեանին իրեն փեսայ ըլլալէն ետքը. կ'երեւայ թէ աս վերջինը պարապ զրամարկղեր ժառանգել շատ չփափաքելով, սակիին ծորակը գոցել տուեր է Մարտիկ աղային, ով զիտէ ինչ պատճառաբանութիւն մը հնարելով:

«Օր մըն ալ իմացանք որ Սուրեան եւ իր կինը Բարիզին մեկներ են զէպի Իտալիա, ամուսնական ճամբորդութեան մը համար: Մարտիկ աղա շարունակեց իր ընթացքը, կուտելով, բարկացնել ուղելով եւ խնդացնել միայն յաջողելով: Որովհետեւ ալ կամաց կամաց առջի օրերուն զայրոյթը անցած էր, եւ զինքը ալ սկսեր էին նկատել իբր անկեղծ գերասան մը, զիցազագաւելտ մը ներկայացնող,

համոզումով ու կիրքով: Օր մըն ալ իմացայ որ ... — Ինչ, զիտե՛ս... Մարտիկ աղան իր հայրենասէրի, յեղափոխական մարտիկի ծիրանի վերարկուն կամ վայրագ զրահը մէկ կողմ նետած նորէն հագեր է իր պահպանողականի բաղքենի ձիւղպէն զուր ունէր Պոլիս՝ եւ Ալեքսանդրիա նոր եկած ատենները: Այո՛, ըսին ինծի թէ Մարտիկ աղա, շաբաթ մը մէջտեղ չեկելէն ետքը, յանկարծ, ապշեցնող երեւում մը ունեցեր է սրճարանները, ընկերութեան մէջ, Պոլսոյ Մարտիկ աղան վարձած նորէն, նոր Մարտիկ աղային փորձառութեան արդիւններովը ճոխացած, — այսինքն կատաղութիւն, ատելութիւն, ոխ՝ զինքը խաբող, զինքը շահադրժողներուն դէմ: Հաւատալս չեկաւ. ուղեցի աչքովս տեսնալ, ականջովս լսել, ճիշդ՝ փրփրացայտ, հերարձակ փիլիպեան մը կը պոռչտար Յեղափոխութեան դէմ, Հնչակեան թէ Դրօշակեան, ամենքն ալ մէկ ցելի մէջ կը բաշքէր, մէկ ջուրով կը լուար, Պոլսոյ կամըջին զուխը կատելու մարդեր կը հոչակէր... խաբեբայ, ստախօս, ոճրագործ, «բան մըն ալ չպիտի ըլլայ, բան մըն ալ չեն կրնար ընել, կ'ըսէր, կը խաբեն կոր, կը խաբեն, ձեզ ալ, մեզ ալ, ինքզինքնին ալ:»

« — Ես խելք չունէի Պոլիս որ այս խայտառակներուն զէմ էի, հոգով մարմնով կը կուտէ անպարտ...» ու կը սկսէր իր Պոլսոյ խելքը փառաբանել, իր Պոլսոյ կարծիքները, Պոլսոյ հայեցողափոխական պայքարը:

«Եթէ պատճառը հարցուէր իրեն՝ այս յեղակարծ հաւատափոխութեան, փոխանակ պատասխանելու աւելի կը գրդուէր, կը կատղէր, իսկ Սուրեանին խօսքը եղած ատեն՝ զէմքը զզուանքի, ատելութեան անասելի արտայայտութիւն մը կը հագնէր. ու շրթունքը թքնելու ձեւ մը կ'ուրուագդէին կարծես:

«Շաբաթ մը Բարիզի հայ ականջներուն այս եղանակը զարնելէն ետքը, օր մըն ալ յանկարծ մեկնեցաւ զէպի Իտալիա, անլուծելի զազանքի մը ապշութեանը մէջ թողլով մեզ: Ինչ պատահեր էր, ինչ անակնկալ զէպք, ինչ յայտնութիւն, որ մեր մարդը կը գտնար կ'ըլլար նորէն Պոլսոյ Մարտիկ աղան: Ես ալ այս մասին ասկից ասելի բան չպիտի կրնայի զրել քեզի, եթէ անցածներս զիպուածաւ չհանգպէի այն սպասուորին որուն վրայ խօսեցայ արդէն եւ զոր մեկնած կը կարծէի Մարտիկ աղային հետ: Սրճարան մը տարի զինքը եւ բերանը բանալու համար գաւաթ մը ապսէնթ ապսպրեցի. զինքը լաւ տրամադրութիւններու մէջ գատելուս պէս մէկէն խնդրը բացի. մէկ երկուք չըսած, մեր մարդը սկսաւ պատմել. օրին մէկը նամակ մը եկեր է Իտալիայէն, զոր ինքն իսկ, ոպասուորը յանձներ է Մարտիկ աղային: Այդ նամակը, իբր թէ մոզական գաւազան մը ըլլար, հրաշափոխեր է Մարտիկ աղան. զրբը հս նէ գտիր առջի Մարտիկը: Շաբաթ մը ամբողջ, առանց տունէն զուրս ելլելու, տան սենեակները, սպասուորին ու մօրը ականջները լեցուցնր, խցուցեր է գերազրգուած զայրոյթի մը պոռչառններովը, վերաւորեալ վայրի գաղան մը զարձած որ վանդակին մէջ մոնչելով՝ գտնար ու գտնար: Ամբողջ շաբաթ մը, ան-

ըսպառ անխոնջ, սպառնալիքներու, լուսանքի, նախա-
տինքներու կատարի բարկոծում մը, թուրքի ու մուրի
փրփրոտ ու վաւաշոտ ժայթքում մը ուղղեր է յեղափոխա-
կաններուն երեսին, բուրբին ալ, Հնչակեաններուն, Դրօ-
շակեաններուն, եղածին ալ չեղածին ալ, անցածին ալ
զալիքին ալ: Սուրեանին դէմ մանաւանդ կրակ ու բոց է
եղեր, ձեռքը տան նէ կոկորդէս բռնել խղզելու կազմ ու
պատրաստ:

« — Ինձի խաբէն հէ՛, ինձի պէս մարդը, ան Սուրեա-
նը, ան շունչանորդին, ինձի այնչափ ատեն խաբեր խաբ-
խբեր է, այնչափ խոստումներ տայ, ազատութիւն տրուի
նէ քեզի սանկ պիտի ընեն նանկ պիտի ընեն, ձեռքի վը-
րայ պիտի պտտցնեն, ազգային բարերար պիտի կոչուին,
պատիւներ, աստիճաններ պիտի տրուին քեզի, ասանկ
բաներ ըսելով դրամս առնէ, ետքէն ալ աղջիկս... ոճրա-
գործ քեզի՛, քու խեղդ պիտի անիծեմ ես, խեղդ... աղ-
ջիկս պիտի առնեմ, տուած դրամներս պիտի պահանջեմ,
քեզի ալ տէրրորի մասնեղ պիտի տամ, շունչանորդի՛,
ինչպէս որ դուն ինձի ըրեր ես, աչքս վախցնելու եւ զիս
ուզածիդ պէս խաղցնելու համար... ես քեզի պիտի հաս-
կըցընեմ իմ ո՛վ ըլլալս... կեցիդ դուն... »

« Յաճախ մայրը նամակին պարունակութիւնը կը հար-
ցընէ եղեր. Մարտիկ աղա, առանց պատասխանելու, ա-
նանկ դէմք մը կ'ընէ եղեր մօրը երեսն ի վեր, որ խեղճ
կիներ, ահաբեկ, սենեակ կը քաշուի աղօթելով: Իսկ սպա-
սաւորին, ամէն օր չախ, վոնտելու սպառնալիք:

« — Օրը տասը անգամ չնչին պատճառի մը համար
զիս վոնտելու կ'ըլլար, ըսաւ սպասաւորը:

« Այս վերջինը, հետաքրքրուած, անպէտ բաներու
կողովին մէջէն հաւաքեր է կտորները նամակին զոր Մար-
տիկ աղա, ընթերցումին յաջորդող բարկութեան լուսնոտ
տաքնապին մէջ, պատուեր է կատարար: Այդ կտոր-
ները քովքովելով կրցեր է մասամբ վերակազմել նամակը,
թէեւ խոշոր պակասներ, լուսնեան կէտեր կ'ախօսեն զայն,
— փոսեր սրոնց վրայէն վերին է մտքին՝ առխտակ մը
ձգել եւ անցնիլ: Ահաւասիկ այդ նամակը զոր ընդօրինա-
կեցի քեզի համար, սպասաւորին ձեռքով փակցուած կը-
տորներուն վրայէն, իր ճերմակ լուսնեաններով:

Սիր...

Ալ ատեն է... մարտութիւնը յայտն... հաւատացէք
որ դիտա... աններս բարի էի... շահուն նպաստ... Եթէ
խաբե... կու մը ձեռք... յիք, աւելի... գէշ... փորձանք-
նե... հանդպիլ: Բարբերաղ... եւ դուք շնորհա... ազդին
որ ինձի պէս... մը հանեց: Ահա ճշմ... տութիւնը, սի-
րե... զիրք... բազդ... երիտասարդ առանց... հարստութ...
եւ արհեստ... աշխարհի մէջ... ինչ ընել... յուսահատու-
թիւ... անձնասպանութեան գաղափարներ... ազդին ճա-
կատա... բազդախնդիրնե... ձեռք... ես պատահմամբ...
թէեւ հակառակ... բայց... միջոց կը փնտռէի... դուրս ել-
ս... Դիւ (Հոս կ'երեւայ թէ, որովհետեւ նամակին այս մա-

սին եւ հետեւողին մէջ կատարեալ անկապակցութիւն կայ,
Սուրեան երկար բարակ ինքզինքը կ'արգարացնէ թէ՛ Յե-
ղափոխութեան մէջ մասած եւ թէ անոր շնորհիւ Մարտիկ
աղան խաբած ըլալուն համար...) ...Չեր աղջիկը կը
սիրէի... միջոցին զիմ... իմ փափաք... աննելու համար...
թէ՛ ձեզ ալ ազատե... յն փորձանքնե... ց դէմ ձեզ ապա-
հովուած չէի տեսնար: Դուք... թէ շատ խելացի... յց զի-
րաւ կը... տաք ուրիշին խօսքերուն: Երբ առջի անգամ
...բրօրի ենթ... զարմա... ինչ զիւրութեամբ... ցաք եւ
միտքս զրի... ազատել... նոյնօրինակ փորձանք... կարդ-
ներէ: Որովհետեւ... Հոգ մի ընէք... աղջկան երջան-
կութ... բաւէ ձեզի: Կը յուսամ սակ... ազատութիւն
տրուի, ոչ այնքան շուտ... պէս որ հաւատացուցի ձեզի...
մօտաւոր ապագայի մէջ... ծառայութիւն... կատի կ'առ-
նուին եւ... արժանաւոր վարձատրութ... կը ստանան...
Ազգային բարերար... սիւ եւ աստիճան... բայց բուրբ-
վին հետու... ալու է յեղափոխ... դրամը խնայել որով-
հետեւ... բայ եւ բազդախնդիր... արհեստ ըրած...

Չեր աղջիկն ալ կը միանայ ինձի... ներում խնդրել...
... ծի համար եւ կ'աղաչէ որ... իր երջանկութեա... մտու-
նաք եղածը... սէր, ... շիղջ... բայց ներեցէք... կը սպա-
սենք որ դաք... իստին երջանիկ ըլլանք... մոռնանք ամին
բան հաւատացէք...

Մնամ
Լ. ՍՈՒՐ...

— Է՛ ճանրմ ինչ է ատ, ընդմիջեց շուկացին ձանձ-
րացած անհամբերած այդ հատկլտեալ ընթերցումէն. ձգէ
տէ շէնք շնորհք պատմէ:

— Չհասկցա՛ր: Սուրեանը Մարտիկ աղային նա-
մակ մըն է գրեր, ընելով որ ալ վազ անցիր այդ քու ե-
րազներէդ, յեղափոխութեան պոչը ձգէ, նորէն քու առջի
կարծիքներուդ դարձիր, բոլոր ըսածներս սուտ էին, զիրք
մը ստեղծելու, իմ բազդս շինելու համար ստիպուեցայ
քեզի խաբել ու շահալործել, հիմակ կուզամ քեզնէ ներում
խնդրել, մոռցիր ատ բաները, եւ եկուր միասին ապրինք
երջանիկ...

— Կեցցէ պէ՛ Սուրեան, ըրաւ մարդը, ամառնկ մար-
դուն ասանկ մարդ կը վայլէ:

— Ճիշդ իմ ընկերս ալ միեւնոյն բանը կ'ըսէ կոր,
մտիկ ըրէ:

« Ահա, բարեկամ, գիտցածներս. ալ տեղեկութիւն
չունիմ մարդուդ վրայ. շիտակը կը հիանամ կոր ես Սուր-
եանին վրայ: Ինչ վարպետ տղայ: Ինչ ճարտարութեամբ
բազդին ըմբոստ նաւը կ'առաւարելու յաջողութեան եզեր-
քը մօտեցնել զիտցաւ: Ես գատապարտելի չեմ գտնար
զինքը: Մարտիկ աղաներուն Սուրեաններ հարկաւոր են,
կը վայլեն: Ամէն տեղ, ինչպէս դէպի ամէն նպատակ, ու-
ղիդ գծով, շիտակ ճամբով չ'երթուիր. երեսակայէ եթէ
Սուրեան շիտ շիտակ Մարտիկ աղային երթար, ու ան-
կեղծօրէն, բրտօրէն ըսէր իրեն. Ես աղքատ եմ, բայց կա-
րող, խելացի, ու լաւագոյն բազդի մը արժանի... դուն

Հարուստ ես, զրամ՝ տո՛ւր ինձի, աղջիկ ունիս, կնույթեան տո՛ւր զայն, ու բարեկամ՝ ըլլանք...

«Խնդալս չեմ կրնար բռնել Մարտիկ աղան միաքս բերելով: Խեղճ Մարտիկ աղա, հակայեղափոխական Մարտիկէ յեղափոխութեան Մարտիրո՛ս ըլլալ:»

ՊԱՐՈՅՐ

Վ Ե Ր Զ

Լ Ո Ւ Ր Ե Ր

ԿՈՉ Ի ՆՊԱՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ Հայաստանէն. եկած աղեկատու շուքերը անտարբեր չքողոցիկ անգլիական մարդասիրութիւնը: Ուսուցիչներու դուքսը հետեւեալ կոչը ուղղեց Անգլիոյ ժողովրդին.

«Թիւրքիոյ դժբաղդ գիշացիներուն բռնաս կացութիւնը զգալապէս կարելի չէ բարձրի, առանց դիմելու այն քաղաքական ուժեղ դարմաններուն զորոնք Եւրոպայի մեծ պետութիւնները չեն ուզեր կոր ի գործ դնել, հակառակ իրենց անգործութեան ցարդ յառաջ բերած անհեղինակ աղետներուն: Սպասելով ատոր, անգլիացի հիշատակներ եւ ամերիկացի միսիոնարներ կան որոնք կրցածնին ըրին եւ պիտի շարունակեն ընել՝ սխոյթելու համար ընդհանուր տառապանքը եւ բռնաառօրէնը, եւ մարդկութեան դատին համար մեծագոյն ծառայութիւն մըն է որ գեղապետ Մեսի՛ Էրզրում, եւ հարիւրապետ Մառնեւե՛ր Վան, կարող ու յօժար են նպաստի համար իրենց զըրկուած ու եւ զոչմար բաշխել ամենեւնի աշխարհի կարօտներուն: Լորտ Սոլպսիի ինձի հաղորդած է օրինակներ Կ. Պոլսոյ անգլիական դեսպանէն ստացուած տեղեկագիրներէ, որոնք կը հաստատեն ատեն ատեն ստացուած մասնաւոր նամակները Փոքր-Ասիոյ մէջ տիրող ընդհանուր բռնաառօրէան մասին: Մարդիկ արդէն սովամահ եղած են, եւ ուտեստի գինը՝ 1897ի ձմեռան գներուն կրկինն է: Բայց նպաստի ուղիք ձեռնարկ կան որոնց վրայ հարկ է հրահարել հանրային ուղղորդութիւնը: 1895էն ի վեր Թիւրքիոյ մէջ 17 որսանոց բացուած են, որոնք կը հոգացան Անգլիոյ, Միացեալ-Նահանգներու, Գաւառացի, Իերմանիոյ, Զուիցերիոյ եւ Շուեյտի բողոքական հասարակութիւններէն: Հիմնադիրներուն ջանքերուն յաջողութիւնը հիմակ այդ որսանոցներուն վրայ հրահարած է Իրան բացուող հակասակութիւնը: Ռուսիա ալ հիմակ անխնայ կը պնդէ կոմիսսի գաղթականներուն դարձին վրայ:

«Չափազանցութիւն չէ ըսել թէ այսօր աշխարհի քան 80,000 Հայ երիկամարդ, կին եւ տղայ մասամբ կամ ամբողջովին կարօտ են Եւրոպայի եւ Ամերիկայի բարեւեր ընկերութեանց նպաստներուն: Կը հաշուուի թէ 20000 ոսկի պէտք է՝ միմիայն սերնեցող գներու համար, եւ նոյնչափ գումար մըն ալ պէտք է որսանոցներուն հա-

մար: Ինձի դրկուած ու եւ զոչմար ուղղորդութեամբ պիտի հետադրեմ Կ. Պոլսոյ դեսպանին:»

ՆՈՒՊԱՐ ՓԱՇՏԱՅԻ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ, որուն մասին վերջերս այնքան տարապայման գրողներ պարտեցան, ինչ կը կարգէ հետեւեալ նամակին որ հրատարակուած է «Տէյի Թիէրիաֆ»ի մէջ.

«Վերջերս թէ Անգլիա եւ թէ՛ ուրիշ երկիրներ շատ մը սխալ տեղեկութիւններ հրատարակուեցան հանգուցեալ Նոսպար փաշայի բողոք հարստութեան մասին:

Իբր հանգուցեալ պետական-մարդուն մէկ վաղեմի եւ մտերիմ բարեկամը, իր ընտանիքին կողմէ արտօսեալ եւ յայտարարելու թէ ու է ձեռնարկութեան չի կայ պարտած այն գրողներուն մէջ որոնց համեմատ Նոսպար փաշա իբր թէ անագին հարստութիւն մը դիզած էր եւ իբր թէ մեծամեծ կտակներ ըրած է:

Ճշմարտութիւնը սա է թէ Նոսպար փաշա անկտակ մեծաւ, եւ՛ գրաւոր կամ բերանացի՝ ու եւ ինչեր չըրողաց: Մեծած պահուն իր անբողջ անձնական հարստութիւնը — առանց հաշուելու Տիէի Նոսպարի անձնական հարստութիւնը, որ իր անուսնոյն հարստութեան իսկ աշխարհուած էր — 150,000 ոսկի հաշուած է, եւ ինչ կ'ըրէ հաշուելով: Յիշեալ հարստութիւնը կը բաղկանար Եգիպտոսի հողերէ, Գաւիթի Զրի Ընկերութեան բաժնեբոլորէ եւ Գաւիթի ու Բարիզ ունեցած բնակարաններէն:

Մեկ քանի տարի առաջ Նոսպար փաշա մտերմօրէն ըրած ինձի իր այն ատենուսն եկամտունի քանակութիւնը: Իր ինձի ըրած յայտնութիւնը կարելի եղածին չափ մտաւորապէս կը համապատասխանէ եկամտունի որ կարելի է սպասել յիշեալ կերպով գործածուած այդքան դրամագլխէ մը:

ԷՏՈՒՐԸՏ ՏԱՅԱԷ՛

Պատձաններ ունիք կարծելու թէ Պ. Էտտարտ Տայսէի տեղեկութիւնները անբողջովին ձիշդ են:

ՀԱՍՏԷ ՈՒ ԲԱԺՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐԻՈՒ ՆԱԺԱԿ ՈՒ ԲԱԺՆԵԳԻՆ ՂՐԿԷՆ ԱՈՒ

L. FRANK,
309, LADBROKE GROVE,
(ENGLAND). LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԿԸ ԱՄՈՒ ԱՄՈՒ 1 ԻՆ ԵՒ 15 ԻՆ: Բաժնեգիրն է Եւրոպայի համար ամերիկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար ամերիկան 2 ու վեցամսեայ 1 տոլար: